



**«Կառավարության ֆինանսների կառավարման
տեղեկատվական համակարգի» ներդրման ծրագրի
ՓՈՒԼ 2.2-ի Հաշվետվություն**

**ԿՏԿՏՀ ներդրման մոդել
ԳՆՈՒՄՆԵՐ**

Հապավումներ

ԿՖԿՏՀ	Կառավարության Ֆինանսների Կառավարման Տեղեկատվական Համակարգ
ՖՆ	Ֆինանսների Նախարարություն
ԳՔՎ	Գնումների Քաղաքականության Վարչություն
Տեղեկագիր	ՀՀ ՖՆ procurement.minfin.am (gnumner.minfin.am) պաշտոնական կայք
ԳԳՕ	Գանձապետարանի գործառնական օր
ԳՊՊԿ	Գնումների պլանավորման և պայմանագրերի կառավարում
ԳՄԱ	Գնումների միասնական անվանացանկ
ԳՀ	Գնանշման հարցում
ԲՄ	Բաց մրցույթ
ՀԲՄ	Հրատապ բաց մրցույթ
ԳՊ	Գնումների պլան
ՊԱ	Պատվիրատուի ադմինիստրատոր
ՀԱ	Համակարգի ադմինիստրատոր
ՊՍ	Պատասխանատու ստորաբաժանում
ԳԶԾ	Գնումներ չհանդիսացող ծրագրեր
«Mulberry» համակարգ	«Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ
ԱՆ	Արդարատատության նախարարություն
ՀՀՀՀ	Հանրային Հատվածի Հաշվապահության Հաշվառման

Բովանդակություն

Հապավումներ	2
Բովանդակություն	3
1. Առկա իրավիճակի ամփոփում	5
Եզրակացություն	7
2. Գնումների մոդուլի կառուցվածք	9
2.1 Թեստավորման մոդուլ	11
2.2 Վերապատրաստման մոդուլ	12
2.3 Գնումների մասնագետների կառավարման մոդուլ	13
2.3.1 Դիմումների ենթամոդուլ	13
2.3.2 Ռեեստր	13
2.4 Տեղեկատվական պորտալ	14
2.5 Գնումների մոդուլ	14
2.5.1 Գնումների պլանավորման ենթամոդուլ	14
2.5.2 Մրցույթների պլանավորման ենթամոդուլ	15
2.5.3 Մրցույթների ենթամոդուլ	16
2.5.4 Էլեկտրոնային աճուրդների ենթամոդուլ	16
2.5.5 Գնումների պայմանագրերի կառավարման ենթամոդուլ	17
2.6 Մասնակիցների կառավարման մոդուլ	17
2.7 Արտաքին համակարգեր	18
2.8 Բյուջետավորման մոդուլ	18
2.9 Պայմանագրերի կառավարման ենթամոդուլ /Հանրային Հատվածի Հաշվապահության Հաշվառման մոդուլ/	19
2.10 Անալիտիկ-հաշվետվողականության մոդուլ	19
2.11 Փոխանակվող տվյալներ	20
3. Գնումների մոդուլի կոնցեպտի ֆունկցիոնալ հնարավորություններ	23
3.1 Գնումների պլանավորում	24
3.2 Մրցույթի պլանավորում	27
3.2.1 Գնման ընթացակարգի նախապատրաստում	28
3.2.2 Պարզաբանման հարցումների տրամադրում	30
3.2.3 Հրավերի բողոքարկում	32
3.2.4 Հրավերի փոփոխություն	33
3.3 Մրցույթ	34
3.3.1 Հայտերի ներկայացում	35

3.3.2 Ստացված հայտերի գնահատում	37
3.3.3 Գնահատման արդյունքների ամփոփում, հայտարարությունների հրապարակում, անգործության ժամկետի սահմանում և բողոքարկում.....	38
3.4 Էլեկտրոնային աճուրդ.....	40
3.4.1 Հայտերի ներկայացում.....	40
3.4.2 Էլեկտրոնային աճուրդի իրականացում	40
3.4.3 Ստացված հայտերի գնահատում.....	44
3.4.4 Գնահատման արդյունքների ամփոփում, հայտարարությունների հրապարակում, անգործության ժամկետի սահմանում և բողոքարկում.....	45
3.5 Գնումների պայմանագրերի կառավարում.....	45
3.5.1 Պայմանագրի շնորհում.....	46
3.5.2 Պայմանագրի ապահովումների ներկայացում /տուժանք, կանխիկ փող, բանկային երաշխիք/	47
3.5.3 Կնքված պայմանագրերի հաշվառում, հայտարարության հրապարակում.....	51
3.5.4 Հանձնման-ընդունման իրականացում, հաշիվ-ապրանքագրերի ներկայացում	53
3.6 Մեկ անձից իրականացվող գնման ընթացակարգեր	54
3.7 Դրամաշնորհի հատկացման ընթացակարգերի իրականացում	56
3.8 Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ընդգրկում և վարում.....	58
3.9 Որակավորման շնորհման քննությանը մասնակցելու դիմումի ներկայացում.....	60
3.9.1 Թեստավորում.....	61
3.9.1.1 Թեստի հարցաշարի ստեղծում.....	62
3.9.1.2 Թեստի ակտիվացում.....	62
3.9.1.3 Թեստի անցկացում	63
3.10 Վերապատրաստում	64
3.10.1 Դասընթացի ակտիվացում	64
3.10.2 Դասընթացի անցկացում, արդյունքների ամփոփում.....	65

Ներածություն

Սույն փաստաթղթում ներկայացված են ՀՀ Ֆինանսների Նախարարության (ՖՆ) Գնումների Քաղաքականության Վարչությունում իրականացվող տարբեր բնույթի գործառնությունները, ՀՀ պետական գնումների համակարգի ուսումնասիրության ամփոփումը, դրանց հիման վրա տրված եզրակացությունները, ինչպես նաև Կառավարության Ֆինանսների Կառավարման Տեղեկատվական Համակարգի (ԿՖԿՏՀ) շրջանակում Պետական Գնումների մոդուլի (այսուհետ՝ Գնումների մոդուլ) ներդրման համար առաջարկվող ֆունկցիոնալ և կառուցվածքային տարբերակները:

Փաստաթուղթը բաղկացած է 3 բաժիններից.

1. Առկա իրավիճակի ամփոփում - ներկայացված է նախորդ փուլում իրականացված ուսումնասիրության ամփոփումը, առկա էլեկտրոնային համակարգերի միջև կապերը, դրանց առավելություններն ու թերությունները, ինչպես նաև տրամադրված է եզրակացություն՝ հիմք ընդունելով առկա բիզնես գործընթացների ամփոփման արդյունքները:
2. Գնումների մոդուլի կառուցվածք - ներկայացված է գնումների գործընթացի ամբողջական ավտոմատացման հնարավոր լուծման կառուցվածքը՝ հիմք ընդունելով առկա բիզնես գործընթացների ամփոփման արդյունքները:
3. Գնումների մոդուլի կոնցեպտի ֆունկցիոնալ հնարավորություններ - ներկայացված է գործընթացների օպտիմալացման և ավտոմատացման տարբերակների ֆունկցիոնալ նկարագրությունը:

1. Առկա իրավիճակի ամփոփում

Գնումների գործընթացը հանդիսանում է ԿՖԿՏՀ գործառնությունների կարևորագույն շրջանակներից մեկը: Ներկայումս, գնումների կառավարումը իրականացվում է հիմնականում ինքնաշխատ եղանակով, տարբեր էլեկտրոնային գործիքների կիրառմամբ: Հարկ է նշել, սակայն, որ որոշ գործառնություններ դեռևս իրականացվում են ոչ ինքնաշխատ:

Գնումների պլանավորման և պայմանագրերի կառավարման ԳՊՊԿ (PPCM) համակարգը ապահովում է գնումների պլանի կազմումը և հետագա կառավարումը, ինչպես նաև գնման ընթացակարգի ստեղծումը, և գնման ընթացակարգի ավարտից հետո հաշվետվությունների և պայմանագրերի կառավարումը:

Գնման ընթացակարգերը կարող են իրականացվել ԱՐՄԵՊՍ և Էլ-Աճուրդ համակարգերի միջոցով՝ կախված «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերի: Գնումների գործընթացին առնչվող հանրային տվյալների հրապարակումը իրականացվում է www.procurement.minfin.am (www.gnumner.am) ՀՀ ՖՆ Պաշտոնական կայքի միջոցով: ԱՐՄԵՊՍ, ԳՊՊԿ և Էլ-Աճուրդ համակարգերը ունեն իրենց հանրային

հասանելի միջերեսները (www.armeps.am, www.armeps.am/ppcm/public/reports և www.e-auction.am):


Այս համակարգերը և կայքը ինտեգրված են միմյանց հետ տարբեր մակարդակներում, մասնավորապես՝ ԳՊՊԿ համակարգը ինտեգրված է ԱՐՄԵՊՍ և ԷԼ-Աճուրդ համակարգերի հետ: Ցանկացած գնման ընթացակարգի կազմակերպում սկսվում է ԳՊՊԿ համակարգում և փոխանցվում ԱՐՄԵՊՍ կամ ԷԼ-Աճուրդ համակարգ՝ կախված «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերի: Գնման ընթացակարգի ավարտից հետո անհրաժեշտ տվյալները հրապարակվում են Տեղեկագրում (www.procurement.minfin.am ՀՀ ՖՆ պաշտոնական կայք): ԱՐՄԵՊՍ համակարգի դեպքում պատվիրատուների կողմից ձեռքով են տվյալները մուտքագրվում համակարգ, իսկ ԷԼ-Աճուրդ համակարգի դեպքում՝ տվյալների հրապարակումը իրականացվում է ինքնաշխատ:

Մրցույթի ավարտից հետո ԱՐՄԵՊՍ և ԷԼ-Աճուրդ համակարգերից տվյալները ինքնաշխատ տեղափոխվում են ԳՊՊԿ համակարգ՝ մրցույթի հաշվետվությունների և պայմանագրերի կառավարման նպատակով: Հաշվետվությունների մուտքագրումից և կնքված պայմանագրերի հաշվառումից հետո, իրականացվում է հանձնման-ընդունման գործընթացը (մուտքագրվում է հանձնման-ընդունման արձանագրությունը և հաշիվ ապրանքագիրը), իսկ այնուհետև իրականացվում է տվյալների ինքնաշխատ փոխանակում գանձապետական համակարգի հետ՝ ստանձնած պարտավորությունների վճարման նպատակով:

Բոլոր համակարգերը ունեն իրենց առանձնացված տվյալների բազան և օգտվողների կառավարման ենթահամակարգ: Այս համակարգերը և կայքը ինտեգրված են միմյանց հետ տարբեր մակարդակներում: Մասնավորապես՝ որոշ դեպքերում տվյալների փոխանցումը մի համակարգից մյուսը իրականացվում է լիարժեք ինքնաշխատ, մասնակի ինքնաշխատ կամ ոչ ինքնաշխատ եղանակներով:

Գնումների համար կիրառվող վերոհիշյալ համակարգերը նաև ինտեգրված են այլ համակարգերի հետ, մասնավորապես գանձապետարանի ԳԳՕ (LS Finance) համակարգի հետ:

Գնումների կառավարման առկա համակարգերը և դրանց փոխկապակցվածությունը ներկայացված է Նկար 1.1-ում:



Նկար 1.1. Գնումների կառավարման առկա համակարգերի նկարագրություն

Եզրակացություն

Ընդհանուր առմամբ գնումների կազմակերպման ներկա մոտեցումները ունեն բազմաթիվ առավելություններ, որոնցից հիմնական կետերով կարելի է առանձնացնել հետևյալը.

1. Գործընթացների մեծ մասն իրականացվում է ինքնաշխատ եղանակով:
2. Էլեկտրոնային գործիքները կիրառության մեջ են երկար ժամանակ, որը հնարավորություն է ընձեռում օգտվողներին բավականին լավ տիրապետել գործիքակազմին:
3. Էլեկտրոնային գործիքների ծրագրային կողերի հիմնական մասը գտնվում է ՀՀ ՖՆ տնօրինության ներքո, որը, ըստ անհրաժեշտության, թույլ է տալիս իրականացնել փոփոխություններ տարբեր համակարգերում:
4. Առկա է բավարար իրավական կարգավորումների բազա՝ գործընթացների ավտոմատացումը պատշաճ կերպով իրականացնելու համար:

Գործընթացների վերլուծությունը, սակայն ի հայտ է բերել որոշ խնդիրներ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական կետերը.

1. Առկա ծրագրային փաթեթները մշակվել են ավելի քան 10 տարի առաջ: Ծրագրային հենքը այս ժամանակահատվածում չի թարմացվել, բացառությամբ ըստ անհրաժեշտության իրականացվող փոփոխությունների:
2. Համակարգերը մշակված են տարբեր ժամանակահատվածներում, տարբեր կազմակերպությունների կողմից և տարբեր ծրագրային հենքերի հիման վրա:
3. Ամեն համակարգ ունի իր տվյալների բազան, որոնք որոշ դեպքերում ստանում և պահպանում են միևնույն տվյալները:
4. Համակարգերի միջև առկա է երկկողմակի կապ, որը, սակայն, տարբեր դեպքերում իրականացվում է ինքնաշխատ, մասնակի ինքնաշխատ և/կամ ոչ ինքնաշխատ եղանակով:
5. Գնումների գործընթացում դեռևս առկա են ոչ ինքնաշխատ գործընթացներ, որոնք խոչընդոտում են միատեսակ և արդյունավետ լուծումների ներդրմանը:
6. Գնումների կառավարման էլեկտրոնային համակարգերի միջև, ինչպես նաև այլ ՀՀ ՖՆ և ոչ ՀՀ ՖՆ համակարգերի միջև ինտեգրացման մակարդակը չի բավարարում ներկայիս բիզնես գործընթացների արդյունավետ իրականացմանը:

Հաշվի առնելով վերոհիշյալը՝ գործընթացների օպտիմալացման համար կարևոր է ԿՖԿՏՀ-ի շրջանակում Գնումների մոդուլի/համակարգի ներդրումը:

Ստորև ներկայացված են համակարգի այն հիմնական պահանջները, որոնք պետք է հաշվի առնվեն վերջինիս նախագծման և մշակման ընթացքում: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ համակարգի պահանջների մանրամասն նկարագրությունը կներկայացվի առանձին բաժիններով:

Հաշվի առնելով ԿՖԿՏՀ առաջարկվող կոնցեպտն¹ ու ուսումնասիրության ամփոփումը, Գնումների մոդուլին ներկայացվող պահանջները հետևյալն են.

- Փոխգործելիություն Բյուջետավորման մոդուլի հետ՝ գնումների պլանի և վերջինիս փոփոխության ինքնաշխատ ստացման համար
- Մրցույթների, աճուրդների իրականացում
- Գնումների պայմանագրերի կառավարում և դրանց փոխգործելիություն Պայմանագրերի կառավարման (Հանրային Հատվածի Հաշվապահության Հաշվառման) մոդուլի հետ
- Թեստավորում, վերապատրաստում
- Անալիտիկ և հաշվետվողական գործառնությունների իրականացում
- Տեղեկատուների կառավարում (ԳՄԱ կողերի մշակում, համատեղում տնտեսագիտական հոդվածների հետ)
- Տվյալների թվայնացում և կենտրոնացում, ինչը թույլ կտա ԿՖԿՏՀ ներքին/արտաքին համակարգերին արդյունավետ օգտվել տվյալներից

¹ Մանրամասն նկարագրությունը ներկայացված է «ԿՖԿՏՀ Ներդրման Մոդել» փաստաթղթում:

- Տվյալների հավաքագրում, մշակում, ինչպես նաև սահմանված ձևաչափերով արտացոլում (օրինակ՝ գնման հայտի, պայմանագրի ձևաչափի առկայություն համակարգում)
- Գնումների մոդուլի օգտվողների լիազորությունների և թույլատրությունների (permissions) կիրառում տվյալների և գործընթացների նկատմամբ

2. Գնումների մոդուլի կառուցվածք


Հաշվի առնելով ԿՖԿՏՀ շրջանակում առաջարկվող մոդուլյար սկզբունքը² առաջարկվում է ԿՖԿՏՀ կոնցեպտում գնումների գործընթացներն իրականացնել Գնումների մոդուլի միջոցով, որը հնարավորություն կունենա ստանալ և տրամադրել տվյալներ ԿՖԿՏՀ այլ մոդուլներին, ինչպես նաև արտաքին համակարգերին:

Միաժամանակ, գնումների գործընթացի ամբողջական ապահովման նպատակով առաջարկվում է ներդնել նաև Գնումների մասնագետների կառավարման մոդուլ, որի մեջ ներառված կլինեն դիմումների և ռեեստրի ենթամոդուլները, ինչպես նաև թեստավորման, վերապատրաստման մոդուլները³, ինչի միջոցով գնումների համակարգողի որակավորում ունենալու նպատակով դիմած անձանց թեստավորման, հետագայում նաև վերապատրաստման գործընթացները կիրականացվեն մեկ համակարգի միջոցով և տվյալները ինքնաշխատ կպահվեն Ռեեստրում:

Գնումների մոդուլի առաջարկվող կառուցվածքային սխեման բերված է նկար 2.1-ում.


² Մանրամասն նկարագրությունը ներկայացված է «ԿՖԿՏՀ Ներդրման Մոդել» փաստաթղթում:

³ Մանրամասն նկարագրությունը ներկայացված է «ԿՖԿՏՀ Ներդրման Մոդել» փաստաթղթի Գլուխ 5, 6 բաժիններում:



Նկար 2.1. Գնումների մոդուլի կառուցվածք

Գնումների մոդուլի ներդրման համար առաջարկվող կառուցվածքային սխեմայի տվյալների հոսքը ներկայացված է նկար 2.2-ում.



Նկար 2.2. Գնումների համակարգի կառուցվածքային սխեմայի տվյալների հոսք

Հաջորդիվ ներկայացվում է առանձին մոդուլների և ենթամոդուլների նշանակությունը, ինչպես նաև կապը մյուս՝ արտաքին և ներքին համակարգերի հետ: Մոդուլների կիրառմամբ իրականացվող գործառնությունների ֆունկցիոնալ նկարագրությունը բերված է հաջորդ գլխում:

2.1 Թեստավորման մոդուլ

Մոդուլը նախատեսվում է ներդնել՝ ապահովելու Գնումների համակարգողների որակավորման շնորհման քննությանը մասնակցելու կարգը և որակավորման շնորհման գործընթացները:

Ներկայումս նշված գործընթացներն իրականացվում են մասնակի ավտոմատացված եղանակով: Գործընթացների ավտոմատացման համար կիրառվում է մեկից ավել էլեկտրոնային համակարգեր (procquali.minfin.am, armeps.am/exam, procurement.minfin.am (gnumner.am)):

Թեստավորման մոդուլի ներդրումը հնարավորություն կընձեռի ԿՖԿՏՀ շրջանակում իրականացնել թեստավորման գործընթացներ տարբեր մոդուլների համար, օրինակ՝ Գնումների մոդուլ, Ներքին աուդիտի մոդուլ⁴, սակայն պետք է բավարարի գնումների մոդուլի պահանջներին և իրավական ակտերին:

Գնումների համակարգողների որակավորման շնորհման գործընթացի ավտոմատացումը հնարավորություն կընձեռի թեստավորման մոդուլին անհրաժեշտ տվյալները (ԳՄ1) ինքնաշխատ ստանալ «Դիմումներ» ենթամոդուլից, ինչպես նաև տվյալների (Թ1) տրամադրումը, մշակումը, պահպանումը Ռեեստրում կիրականացվի ինքնաշխատ, կձևավորվեն հարմոնիզացված տվյալներ (Data Harmonization), որոնք կիրառելի կլինեն «Անալիտիկ-հաշվետվողական» մոդուլում և կիրառարակվեն Տեղեկատվական պորտալում:

2.2 Վերապատրաստման մոդուլ

Մոդուլը նախատեսվում է ներդնել՝ ապահովելու ՀՀ ՖՆ գնումների քաղաքականության վարչությանը /այսուհետ՝ Լիազոր մարմին/ կազմակերպել Գնումների համակարգողի որակավորում ունեցող մասնագետների վերապատրաստման դասընթացներ (ինչպես առկա, այնպես էլ առցանց), ընդգրկել դասընթացներում համապատասխան որակավորում ունեցող անձանց, վարել հաճախման մատյաններ և այլն:

Ներկայումս վերապատրաստման ենթակա գնումների համակարգողը կամ վերջինիս ղեկավարը վերապատրաստման դասընթացներին մասնակցելու համար էլեկտրոնային փոստի, կամ «Mulberry» փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով գրավոր դիմում է ներկայացնում ՀՀ Ֆինանսների նախարարին՝ կցելով անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը:

Գործընթացի ավտոմատացումը հնարավորություն կընձեռի վերապատրաստման ենթակա գնումների համակարգողների տվյալները (ԳՄ2) ստանալ Ռեեստրից, ինչպես նաև կիրականացնի վերապատրաստված կամ/և որակավորումից զրկված գնումների համակարգողների տվյալների (Վ1) մշակումը և տրամադրումը Ռեեստրին: Կձևավորվեն հարմոնիզացված տվյալներ (Data Harmonization), որոնք կիրառելի կլինեն Անալիտիկ-հաշվետվողական մոդուլում և կիրառարակվեն Տեղեկատվական պորտալում: Անհրաժեշտ տվյալները կիրառելի կլինեն նաև Օգտվողների կառավարման մոդուլում:

⁴ Մանրամասն նկարագրությունը ներկայացված է «ԿՖԿՏՀ Ներդրման Մոդել» փաստաթղթի գլուխ 5-ում:

2.3 Գնումների մասնագետների կառավարման մոդուլ

2.3.1 Դիմումների ենթամոդուլ

Դիմումների ենթամոդուլը թույլ է տալու դիմորդներին գնումների համակարգողների որակավորում ստանալու նպատակով էլեկտրոնային դիմումներ (ԳՄ1) ներկայացնել թեստավորմանը մասնակցելու՝ հետագայում որակավորված գնումների համակարգողների Ռեեստրում ընդգրկվելու նպատակով:

2.3.2 Ռեեստր

Գնումների մասնագետների ռեեստրի ներդրումը պետք է թույլ տա Լիազոր մարմնին պահել և մշակել մի շարք տեղեկատվություն, մասնավորապես.

- Որակավորված գնումների համակարգողների վերաբերյալ տեղեկատվություն
- Որակավորումից զրկված գնումների համակարգողների վերաբերյալ տեղեկատվություն
- Վերապատրաստման ենթական գնումների համակարգողների վերաբերյալ տեղեկատվություն
- Վերապատրաստված գնումների համակարգողների վերաբերյալ տեղեկատվություն

Ներկայումս ռեեստրի վարումը իրականացվում է MS WORD ֆայլերում, իսկ անհրաժեշտ տվյալները ստացվում են հիմնականում էլեկտրոնային փոստի, կամ «Mulberry» փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով և ձեռքով մուտքագրվում են նշված ֆայլում, որն էլ հետագայում հրապարակվում է Տեղեկագրում:

Ռեեստրի ներդրումը թույլ կտա ավտոմատացնել նշված գործառույթը՝ ապահովելով միատեսակ տվյալների ստացում և մշակում՝ անալիտիկ-հաշվետվողականության մոդուլին տրամադրելու համար: Ռեեստրի տվյալները կիրառելի կլինեն նաև Օգտվողների կառավարման մոդուլում՝ սահմանելու որակավորված գնումների համակարգողների լիազորությունները, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում սահմանափակելու որակավորված գնումների համակարգողների գործունեությունը՝ ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 29-ի N 759-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ մասի պահանջներ առկայության դեպքում:

2.4 Տեղեկատվական պորտալ

Տեղեկատվական պորտալ ենթամոդուլը ապահովելու է «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված բոլոր դեպքում անհրաժեշտ տեղեկատվության հրապարակումը: Ներկայումս որոշ տվյալներ հրապարակվում են գործող համակարգերի միջոցով ինքնաշխատ տարբերակով, սակայն որոշ տեղեկատվություն ներմուծվում է ձեռքով տարբեր համակարգերից արտահանման և ներբեռնման միջոցով:

Նոր տեղեկատվական պորտալը պետք է մշակվի այնպես, որ բոլոր հրապարակման ենթակա տվյալները (Գ7) ստացվեն անհրաժեշտ մոդուլներից ինքնաշխատ. անալիտիկ-հաշվետվողական մոդուլ, գնումների մոդուլի առանձին ենթամոդուլներ և այլն:

Տեղեկատվական պորտալը պետք է ապահովի հանրամատչելի տվյալների, մշակում և ներկայացում BI (Business Intelligence) գործիքի միջոցով (BI dashboard), որը հնարավորություն կտա իրականացնել տվյալների որոնում, ֆիլտրում և ներկայացում համապատասխան ձևաչափով, օրինակ՝ գրաֆիկների, աղյուսակների և այլնի տեսքով:

2.5 Գնումների մոդուլ

Գնման գործընթացի իրականացման համար ԿՖԿՏՀ-ում նախատեսվում է ներդնել Գնումների մոդուլ, որը նախատեսված է գնումների պլանավորման, գնման գործընթացի իրականացման (կախված գնման ձևից) և գնումների պայմանագրերի կառավարման համար:

2.5.1 Գնումների պլանավորման ենթամոդուլ

Ենթամոդուլի ներդրումը պետք է թույլ տա ապահովել գնումների պլանավորման, ինչպես նաև գնումների պլանում փոփոխությունների հաստատման գործընթացները:

Ներկայումս այս գործընթացներն իրականացվում են մասնակի ավտոմատացված եղանակով: Գործընթացների ավտոմատացման համար կիրառվում է մեկից ավել էլեկտրոնային համակարգեր, մասնավորապես՝

- LS Budget
- Գանձապետարանի գործառնական օր (ԳԳՕ) համակարգ (այսուհետ՝ LS finance)
- Գնումների պլանավորման և պայմանագրերի կառավարման (ԳՊՊԿ) համակարգ (այսուհետ՝ PPCM)

Տվյալների փոխանակումը այս համակարգերի միջև իրականացվում է արտահանում-ներբեռնում եղանակով (LS Budget-ից LS Finance պլանի ներմուծումն իրականացվում է ֆայլերի DBF ձևաչափով, իսկ LS Finance-ից PPCM՝ Excel ձևաչափով):

Գործընթացների ուսումնասիրության ժամանակ գրանցվել են տարբեր բնույթի խնդիրներ, որոնք պահանջում են գործող ընթացակարգերի վերանայում՝ ապահովելու վերջիններիս առավել օպտիմալ կիրառումը: Մասնավորապես.

- Մի քանի էլեկտրոնային համակարգերի առկայությունը
- Որոշ համակարգերի միջև ինտեգրացիայի բացակայությունը
- Որոշ համակարգերի թարմացումների անհնարինությունը (որոշ համակարգեր մշակվել են ավելի քան 10 տարի առաջ, ծրագրային հենքը այս ժամանակահատվածում չի թարմացվել, բացառությամբ ըստ անհրաժեշտության իրականացվող փոփոխությունների)
- Հարմոնիզացված տվյալների բացակայությունը (Data harmonization)

Գործընթացի ավտոմատացման նպատակով գնումների պլանի համար անհրաժեշտ տվյալների փոխանակումը առաջարկվում է իրականացնել Բյուջետավորման մոդուլի Բյուջեի կազմման ենթամոդուլի (Բ1) հետ⁵, ապահովելով տեղեկատվության ներկայացում ցանկացած փոփոխության դեպքում, ինչն էլ կնպաստի գնումների պլանի ինքնաշխատ ստացմանը համապատասխան ձևաչափով, հաստատմանը ՀՀ ՖՆ գնումների քաղաքականության վարչության կողմից և տվյալների համապարփակ տրամադրմանը (Գ1) այլ ենթամոդուլներին:

2.5.2 Մրցույթների պլանավորման ենթամոդուլ

Ենթամոդուլի ներդրումը ապահովելու է մրցույթների նախագծման գործընթացների իրականացումը:

Չնայած որ գործընթացներն իրականացվում են հիմնականում ինքնաշխատ եղանակով, այնուամենայնիվ, գործընթացների ուսումնասիրության ժամանակ գրանցվել են տարբեր բնույթի խնդիրներ, որոնք պահանջում են գործող ընթացակարգերի վերանայում՝ ապահովելու վերջիններիս առավել օպտիմալ կիրառումը ԿՖԿՏՀ-ի շրջանակում:

Ներկայումս ցանկացած գնման ընթացակարգի կազմակերպում սկսվում է ԳՊՊԿ համակարգում և փոխանցվում ԱՐՄԵՊՍ կամ ԷԼ-Աճուրդ համակարգ՝ կախված «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերի: Գնման ընթացակարգի ավարտից հետո անհրաժեշտ տվյալները հրապարակվում են Տեղեկագրում (www.procurement.minfin.am ՀՀ ՖՆ պաշտոնական կայք): ԱՐՄԵՊՍ համակարգի դեպքում պատվիրատուների կողմից ձեռքով են տվյալները մուտքագրվում համակարգ, իսկ ԷԼ-Աճուրդ համակարգի դեպքում՝ տվյալների հրապարակումը իրականացվում է ինքնաշխատ:

⁵ Գործընթացի մանրամասները ներկայացված են Բյուջետավորման մոդուլում:

Մրցույթների պլանավորման ենթամոդուլի ներդրումը թույլ կտա անհրաժեշտ տվյալները ստանալ Գնումների պլանավորման ենթամոդուլից (Գ1) և իրականացնել գնման (մրցույթ, աճուրդ) գործընթացների պլանավորման և նախագծման աշխատանքները Գնումների համակարգում՝ կիրառելով Համակարգում ինտեգրված անհրաժեշտ ձևանմուշները, ինչն էլ կնպաստի միատեսակ տվյալների ստացմանը, ինչպես նաև, «Mulberry» փաստաթղթաշրջանառության համակարգի հետ փոխգործակցման դեպքում՝ հրամանների էլեկտրոնային ստորագրմանը:

2.5.3 Մրցույթների ենթամոդուլ

Ենթամոդուլի ներդրումը ապահովելու է մրցույթների գործընթացի օպտիմալ իրականացումը:

Ներկայումս գործընթացներն հիմնականում իրականացվում են ավտոմատ եղանակով, սակայն որոշ գործընթացներ ունեն լրամշակման, ավտոմատացման անհրաժեշտություն, ինչպես նաև քննարկումների արդյունքով պարզ է դարձել, որ գնումների նախապատրաստման գործընթացները պետք է իրականացվեն «Մրցույթների պլանավորման» ենթամոդուլում, այնուհետև, կախված «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերի, տեղափոխվեն «Մրցույթների» ենթամոդուլ:

Գործընթացի օպտիմալացնելը թույլ կտա Համակարգում անհրաժեշտ տեղեկատվությունը (Գ2) ինքնաշխատ ստանալ «Մրցույթների պլանավորման» ենթամոդուլից, ինչպես նաև բոլոր մրցույթների նախագծման գործընթացներն իրականացնել մեկ ենթամոդուլում, այնուհետև, կախված «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերի, տեղափոխել համապատասխան ենթամոդուլ (Օրինակ՝ Մրցույթների ենթամոդուլ):

Վերոհիշյալ գործընթացը հնարավորություն կընձեռնի տվյալների մշակումը իրականացնել մեկ ենթամոդուլում, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված բոլոր դեպքերում իրականացնել տվյալների ինքնաշխատ հրապարակում Տեղեկատվական պորտալում (Գ7):

2.5.4 Էլեկտրոնային աճուրդների ենթամոդուլ

Ենթամոդուլը ապահովելու է գնումների գործընթացների իրականացումը էլեկտրոնային աճուրդների համակարգով:

Ներկայումս գործընթացն իրականացվում է ավտոմատ եղանակով, սակայն քննարկումների արդյունքով պարզ է դարձել, որ գնումների նախապատրաստման գործընթացներն պետք է իրականացվեն «Մրցույթների պլանավորման» ենթամոդուլում, այնուհետև տեղափոխվեն «Էլեկտրոնային աճուրդների» ենթամոդուլ:

Գործընթացի օպտիմալացնելը թույլ կտա անհրաժեշտ տեղեկատվությունը (Գ2) ինքնաշխատ ստանալ «Մրցույթների պլանավորման» ենթամոդուլից, ինչպես նաև բոլոր մրցույթների նախագծման գործընթացներն իրականացնել մեկ ենթամոդուլում, և արդեն,

կախված «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերի, տեղափոխել համապատասխան ենթամոդուլ (Օրինակ՝ Էլեկտրոնային աճուրդների ենթամոդուլ), ինչի շնորհիվ հնարավոր կլինի տվյալների մշակում իրականացնել մեկ ենթամոդուլում, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված բոլոր դեպքերում իրականացնել տվյալների ինքնաշխատ հրապարակում Տեղեկատվական պորտալում (Գ7):

2.5.5 Գնումների պայմանագրերի կառավարման ենթամոդուլ

Ենթամոդուլը ապահովելու է գնման ընթացակարգերի ավարտից հետո առկա պայմանագրերի կառավարումը:

Ներկայումս գործընթացն իրականացվում է մասնակի ավտոմատ եղանակով, մասնավորապես՝ պայմանագրերի փոխանակումը իրականացվում է բեռնման, ստորագրման և ներբեռնման միջոցով: Ինչպես նաև ՀՀ ՖՆ Գանձապետական համակարգի հետ առկա են տվյալների փոխանակման խնդիրներ, մասնավորապես՝ որոշ մարմիններ պայմանագրերի մուտքագրում գնումների համակարգ չեն իրականացնում, այլ հաշիվ-ապրանքագրերը միանգամից մուտքագրում են գանձապետական (LS Finance) համակարգ, ինչն էլ բերում է տվյալների կորստի:

Օպտիմալացման տեսանկյունից ԿՖԿՏՀ-ում նախատեսվում է ներդնել «Պայմանագրերի կառավարման» մոդուլ/ենթամոդուլ (ըստ ԿՖԿՏՀ կոնցեպտի ներառվում է Հանրային հատվածի հաշվապահության մոդուլում), որը թույլ կտա կառավարել բոլոր ԿՖԿՏՀ պայմանագրերը (Օրինակ՝ գնումների, պետական պարտքի մոդուլներից ձևավորված պայմանագրերը) մեկ միջավայրում, ուստի առաջարկվում է Գնումների մոդուլում ձևավորված պայմանագրերի (Գ5) ինքնաշխատ փոխանակում իրականացնել միասնական պայմանագրերի կառավարման մոդուլ/ենթամոդուլի հետ (ՀՀՀՀ), ինչն էլ կնպաստի միատեսակ տվյալների ստացմանը, մշակմանը և փոխանակմանը մյուս անհրաժեշտ ԿՖԿՏՀ մոդուլներ հետ (օրինակ Գանձապետական մոդուլ):

2.6 Մասնակիցների կառավարման մոդուլ

Մասնակիցների կառավարման մոդուլի ներդրումը պետք է թույլ տա Լիազոր մարմնին պահել և մշակել մի շարք տեղեկատվություն, օրինակ՝

- Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների վերաբերյալ տեղեկատվություն
- Դատական կարգով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների վերաբերյալ տեղեկատվություն

- Մնանկության մեջ գտնվող մասնակիցների վերաբերյալ տեղեկատվություն և այլն

Նշված մոդուլի ներդրումը հնարավորություն կընձեռի անհրաժեշտ տվյալները (ՄԿ1) ստանալ մեկ միասնական բազայից, որից կօգտվեն Գնումների անհրաժեշտ ենթամոդուլները՝ գնման գործընթացների ցանկացած փուլում:

2.7 Արտաքին համակարգեր

Գնման ընթացակարգերի ժամանակ Գնումների մոդուլը առընչվում է մի շարք արտաքին համակարգերի հետ, օրինակ՝

- ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստր
- ՀՀ ԱՆ բնակչության պետական ռեգիստր
- Բանկեր
- ՀՀ դատարաններ
- այլ պետական գերատեսչական մարմիններ

**Տվյալների փոխանակման համար վերոհիշյալ համակարգերը կարող են ինտեգրվել ՀՀ կառավարության տվյալների փոխանակման միասնական հարթակ (Government Interoperability Platform) GIP-ի հետ, որի օպերատորն է ԷԿԵՆԳ ՓԲԸ-ն:*

Գնումների մոդուլը գնման գործընթացի տարբեր փուլերում ստանում է անհրաժեշտ տեղեկատվություն Արտաքին համակարգերից (օրինակ՝ ՀՀ ԱՆ Պետական ռեգիստրի Իրական շահառուների, սննակության մեջ գտնվող անձանց վերաբերյալ տվյալներ և այլն):

2.8 Բյուջետավորման մոդուլ

Բյուջետավորման մոդուլը նախատեսված է պետական մարմինների կողմից բյուջետային հայտերի կազմման, ինչպես նաև եկամուտների կանխատեսման, բյուջեի հավասարակշռման և համայնքների հաստատված բյուջեների ստացման գործընթացներն իրականացնելու համար:

Բյուջետավորման մոդուլը ներառում է Բյուջեի կազմման ենթամոդուլը, որի միջոցով իրականացվում է բյուջետավորման հայտերում լրացված տվյալների մշակում և ինքնաշխատ տրամադրում Գնումների մոդուլին՝ գնումների պլան ձևավորելու նպատակով:

2.9 Պայմանագրերի կառավարման ենթամոդուլ /Հանրային Հատվածի Հաշվապահության Հաշվառման մոդուլ/

Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման (ՀՀՀՀ) մոդուլը նախատեսված է ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների կենտրոնացված հաշվապահական հաշվառման համար: Արդյունքում հնարավոր է դառնալու ձևավորել պետական մակարդակով համախմբված ֆինանսական բյուջեի կատարողական և ԿՖՎ հաշվետվությունները:

Հանրային հատվածի հաշվապահական մոդուլը իրականացվելու է նաև ԿՖԿՏՀ պայմանագրերի կառավարումը: Գնումների մոդուլում ձևավորված պայմանագրերի (Գ5) ինքնաշխատ փոխանակում է իրականացվելու պայմանագրերի կառավարման մոդուլ/ենթամոդուլի հետ (ՀՀՀՀ):

2.10 Անալիտիկ-հաշվետվողականության մոդուլ

ԿՖԿՏՀ-ում նախատեսվում է ներդնել Անալիտիկ-Հաշվետվողական մոդուլ, որը կիրառելի կլինի ԿՖԿՏՀ բոլոր մոդուլների կողմից՝ անալիտիկ-հաշվետվողական գործառույթները մեկ տիրույթում իրականացնելու համար⁶:

Անալիտիկ-Հաշվետվողական մոդուլը նախատեսվում է կիրառել նաև ՀՀ ՖՆ գնումների քաղաքականության վարչության «Անալիտիկ գործառույթների» համար: Վերջինս թույլ է տալու Գնումների մոդուլի ներքին ենթամոդուլներում մշակված անալիտիկ տվյալները կենտրոնացնել և կիրառել տարբեր անալիտիկ-հաշվետվողական գործառույթներ իրականացնելիս:

Բացի Գնումների մոդուլի տվյալներից Անալիտիկ-Հաշվետվողական մոդուլը կենտրոնացնում է նաև ԿՖԿՏՀ մյուս մոդուլների անալիտիկ տվյալները, որոնք նույնպես կարող են կիրառվել ՀՀ ՖՆ գնումների քաղաքականության վարչության աշխատակիցների կողմից՝ համապատասխան լիազորության դեպքում:

ԿՖԿՏՀ-ում նախատեսվում է ներդնել Տեղեկատուների մոդուլ (օրնակ՝ ԳՄԱ կողերի տեղեկատու), որը կիրառելի կլինի ԿՖԿՏՀ բոլոր անհրաժեշտ մոդուլների կողմից՝ տվյալներից միասնական տիրույթում օգտվելու համար: Վերջինիս գործառույթները իրականացվելու են Անալիտիկ-հաշվետվողական մոդուլում:

Այս մտտեցումը թույլ է տալու ինչպես Գնումներ, այնպես էլ ԿՖԿՏՀ մյուս մոդուլներին իրականացնել հնարավորինս համապարփակ անալիտիկ-հաշվետվողական գործառույթներ:

⁶ Մանրամասն նկարագրությունը ներկայացված է «ԿՖԿՏՀ Ներդրման Մոդել» փաստաթղթում:

2.11 Փոխանակվող տվյալներ

Հ/Հ	Ինտեֆեյս	Տվյալներ	Տրամադրող մոդուլ/ենթամոդուլ	Կիրառող մոդուլ/ենթամոդուլ
1	ԳՄ1	Թեստավորման դիմումներ/հայտեր	Գնումների մասնակիցների կառավարման մոդուլ	Թեստավորման մոդուլ
2	Թ1	Թեստավորված գնումների մասնագետների վերաբերյալ տվյալներ	Թեստավորման մոդուլ	Գնումների մասնակիցների կառավարման մոդուլ
3	ԳՄ2	Վերապատրաստման ենթակա գնումների մասնագետների վերաբերյալ տվյալներ	Գնումների մասնակիցների կառավարման մոդուլ	Վերապատրաստման մոդուլ
4	Վ1	Վերապատրաստված գնումների մասնագետների վերաբերյալ տվյալներ	Վերապատրաստման մոդուլ	Գնումների մասնակիցների կառավարման մոդուլ
5	ԳՄ3	Անհրաժեշտ անալիտիկ տվյալներ	Գնումների մասնակիցների կառավարման մոդուլ	Անալիտիկ-հաշվետվողական մոդուլ
6	ԱՀ3	Անալիտիկ-հաշվետվողական մոդուլում մշակված հրապարակման ենթակա տվյալներ	Անալիտիկ-հաշվետվողական մոդուլ	Տեղեկատվական պորտալ
7	Գ6	Գնումների մոդուլում մշակված անալիտիկ տվյալներ	Գնումների մոդուլ	Անալիտիկ-հաշվետվողական մոդուլ
8	Գ7	«Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված հրապարակման ենթակա	Գնումների մոդուլ 1. Գնումների պլանավորման	Տեղեկատվական պորտալ

		<p>տեղեկատվություն</p> <ol style="list-style-type: none"> 1. Գնումների պլան 2. Մրցույթի/Աճուրդի հրավեր 3. Պարզաբանման հարցումներ 4. Հրավերում կատարված փոփոխություններ 5. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն 6. Չափաբաժնի չկայանալու մասին հայտարարություն 	<p>ենթամոդուլ</p> <ol style="list-style-type: none"> 2. Մրցույթի պլանավորման ենթամոդուլ 3. Մրցույթի պլանավորման ենթամոդուլ 4. Մրցույթի պլանավորման ենթամոդուլ 5. Աճուրդի, Մրցույթի ենթամոդուլ 6. Աճուրդի, Մրցույթի ենթամոդուլ 	
9	ԱՀ2	Անհրաժեշտ անալիտիկ տվյալներ	Անալիտիկ-հաշվետվողական մոդուլ	Գնումների մոդուլ
10	ԱՀ2.1	Գնումների որակավորումից զրկված անձանց տվյալներ	Անալիտիկ-հաշվետվողական մոդուլ	Ռեեստր
11	Գ1	Մրցույթի պլանավորման համար անհրաժեշտ տվյալներ, օրինակ՝ Գնման առարկա, գնման ձև, ԳՄԱ կոդ, չափման միավոր, միավորի գին, և այլն	Գնումների մոդուլ/ Գնումների պլանավորման ենթամոդուլ	Գնումների մոդուլ/ Մրցույթի պլանավորման ենթամոդուլ
12	Գ2	Մրցույթի հրավերով նախատեսված անհրաժեշտ տվյալներ	Գնումների մոդուլ/ Մրցույթի պլանավորման ենթամոդուլ	Գնումների մոդուլ/ Աճուրդի, Մրցույթի, Պայմանագրերի կառավարման ենթամոդուլներ
13	Գ3	Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի վերաբերյալ տեղեկատվություն Հանձնաժողովի անդամների	Գնումների մոդուլ/ Աճուրդի ենթամոդուլ	Գնումների մոդուլ/ Պայմանագրերի կառավարման ենթամոդուլ


		գնահատականներ Այլ		
14	Գ4	Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի վերաբերյալ տեղեկատվություն Հանձնաժողովի անդամների գնահատականներ Այլ	Գնումների մոդուլ/ Մրցույթի ենթամոդուլ	Գնումների մոդուլ/ Պայմանագրերի կառավարման ենթամոդուլ
15	ՄԿ1	Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների տվյալներ	Մասնակիցների կառավարման մոդուլ	Գնումների մոդուլ/ Աճուրդի, Մրցույթի, ենթամոդուլներ
16	ՄԿ2	Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների տվյալներ	Մասնակիցների կառավարման մոդուլ	Տեղեկատվական պորտալ
17	ՍՏ1	Սննդամթերքի մեջ գտնվող մասնակիցների տվյալներ Դատվածության մեջ գտնվող մասնակիցների տվյալներ Այլ	Արտաքին համակարգեր	Գնումների մոդուլ/ Աճուրդի, Մրցույթի, ենթամոդուլներ
18	Գ5	Գնումների պայմանագիր և դրա կատարումը հիմնավորող տվյալներ	Գնումների մոդուլ/ Գնումների պայմանագրերի կառավարման ենթամոդուլ	Հանրային Հատվածի Հաշվապահություն/Պայմանագրեր
19	Բ1	Բյուջեի ծախսերի և ելքերի վերաբերյալ տվյալներ	Բյուջետավորման մոդուլ	Գնումների մոդուլ/Գնումների պլանավորում

3. Գնումների մոդուլի կոնցեպտի ֆունկցիոնալ հնարավորություններ

Մեկ միասնական համակարգի մշակմանը զուգահեռ անհրաժեշտ կլինի իրականացնել գործող բիզնես գործընթացների օպտիմալացում:

Սույն բաժնում ներկայացված են առաջարկություններ առկա բիզնես գործընթացների օպտիմալացման վերաբերյալ: Մասնավորապես, որոշ բիզնես գործընթացներ խմբավորվել են և նկարագրված է դրանց օպտիմալացման մեխանիզմները:

Գործընթացների օպտիմալացման ընդհանուր նախապայման է հանդիսանում ԿՖԿՏՀ-ի կառուցվածքում գնումների մոդուլի կիրառումը, որը իր մեջ պետք է ներառնի առկա գործող տեղեկատվական համակարգերի գործառնությունները, ինչպես նաև օպտիմալացման առաջարկությունների արդյունքում առաջացած այլ պահանջների իրականացումը:



Նկար 3.1. Գնումների գործընթացի համապարփակ նկարագրություն


ԿՖԿՏՀ շրջանակում գնումների պլանի տվյալների փոխանակումը առաջարկվում է իրականացնել Բյուջետավորման մոդուլի Բյուջեի կազմման ենթամոդուլի հետ: Գնումների պլանավորման գործընթացի ավարտից հետո, սկսվում է պլանում ներառված չափաբաժինների /լոտերի/ մասով գնման ընթացակարգի իրականացումը:

Գնումների նոր մոդուլի շրջանակում առաջարկվում է բոլոր տեսակի գնման ընթացակարգերի նախագծման գործընթացներն (Օրինակ՝ գնման ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանման, մրցույթի քարտուղարի ընտրություն, մրցույթի նախագծում, պարզաբանման հարցումների տրամադրում, հրավերի հրապարակում, բողոքարկում, հրավերի փոփոխությունների իրականացում) իրականացնել «Մրցույթի պլանավորում» ենթամոդուլում, այնուհետև կախված «Գնումների մասին» ՀՀ օրենքով

նախատեսված դեպքերի՝ մրցույթի տվյալները փոխանցվեն «Մրցույթ»-ի կամ «ԷԼ-Աճուրդ»-ի համակարգեր:


**Մեկ անձից իրականացվող գնման ընթացակարգերի դեպքում «Մրցույթի պլանավորման» ենթամոդուլից տվյալների տեղափոխում «Մրցույթ» ենթամոդուլ չի իրականացվում՝:*

Մրցույթի և ԷԱԸ-ի արդյունքների ամփոփումից և հաղթողի ընտրությունից հետո պայմանագրի շնորհման արդյունքները փոխանցվում են Գնումների պայմանագրերի կառավարման ենթամոդուլ, որտեղ սկսվում է պայմանագրի կառավարման գործառույթը:



Նկար 3.2. Գնումների գործընթացի մանրամասն նկարագրություն

3.1 Գնումների պլանավորում



⁷ Գործընթացը նկարագրված է «Մեկ անձից իրականացվող գնման ընթացակարգեր» բաժնում:

Նպատակ	Գնումների պլանավորում, հրապարակում, պլանի փոփոխությունների և լրացումների իրականացում
Նկարագրություն /Ընթացք	<p>Գնումների պլանավորման գործընթացի օպտիմալացման ընդհանուր նախապայման է հանդիսանում ՀՀ պետական բյուջեի ծախսակազմման գործընթացը: Բյուջետային հայտերում ընդգրկված այն միջոցառումները, որոնք պարունակում են գնում հանդիսացող ապրանքներ և/կամ ծառայություններ լրացվելու են սահմանված ձևաչափով, ինչի արդյունքում ձևավորվելու է գնումների նախնական պլան⁸:</p> <p>Բյուջետային հայտերում ընդգրկված գնում հանդիսացող ապրանքների և ծառայությունների դեպքում դրանց լրացման համար առաջարկվում է երկու տարբերակ.</p> <p><u>Տարբերակ 1:</u> Ծախսակազմման փուլում բյուջետային հայտերում ընդգրկված գնում հանդիսացող ապրանքների և ծառայությունների դեպքում անհրաժեշտ տվյալները լրացվեն համապատասխան ԳՄԱ (CPV) կոդերով:</p> <p><u>Տարբերակ 2:</u> Սահմանել ընթացակարգ, որը հնարավորություն կընձեռի օպտիմալացնելու տեսակետից անհրաժեշտ տվյալները լրացվեն հոդվածների մակարդակով առանց ԳՄԱ կոդերի: Ընթացակարգը թույլ կտա սահմանված փուլում, օրինակ՝ մինչև ՀՀ պետական բյուջեի վերջնական հայտի ձևավորումը բոլոր տվյալները լրացվեն հոդվածների մակարդակով, նոր ըստ հոդվածների ավելացվեն համապատասխան ԳՄԱ կոդերը: Նշված ընթացակարգի սահմանումը հնարավորություն կընձեռի օպտիմալացնել գնումների պլանավորման գործընթացը՝ մասնավորապես. գնումների պլանի համար անհրաժեշտ տվյալները սահմանված ձևաչափով կձևավորվեն Բյուջեի կազմման ենթամոդուլից (Բյուջետային հայտերից), սակայն ԳՄԱ կոդերի փոփոխություններ ծախսակազմման ամբողջ գործընթացի ժամանակ չի իրականացվի:</p> <p><i>*Դրամաշնորհների հատկացումների դեպքում Բյուջետավորման մոդուլում լրացվում է համապատասխան հոդվածը (Օրինակ՝ Այլ կապիտալ դրամաշնորհներ), նշվում է գնման ձևը՝ «Դրամաշնորհի ուղիղ հատկացում» կամ «Դրամաշնորհի մրցույթ», կող և այլն:</i></p>

⁸ Գործընթացի մանրամասն նկարագրությունը ներկայացված է Բյուջետավորման մոդուլում:

Անհրաժեշտ փուլում ստացված տվյալների հիման վրա Համակարգի կողմից ինքնաշխատ ձևավորվելու է գնումների պլան սահմանված տեղեկատվությամբ, մասնավորապես՝ ԳՄԱ կողմ, գնման առարկա, չափման միավոր, գնման ձև, միավորի գին, քանակ, ընդհանուր գին, ծրագիր (դասակարգիչները և անվանումը), միջոցառում (դասակարգիչները և անվանումը), տնտեսագիտական դասակարգման հոդված, 90000-ով հաշվեհամար (անհրաժեշտության դեպքում համակարգում առկա այլ տվյալների արտացոլման հնարավորություն) և իրականացվելու են գնման ձևերի անհրաժեշտ ստուգումներ՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի, օրինակ՝

- Գնման առարկայի համար «Գնանշման Հարցում» գնման ձև ընտրելու դեպքում Համակարգը հնարավորություն է ընձեռելու գումարը սահմանել մինչև 80 մլն դրամ:
- Եթե գնումների պլանի լրացման ժամանակ գնման առարկայի համար գնման ձև է սահմանվել «Մեկ անձ»-ը (ներառյալ՝ Հրատապության հիմքով մեկ անձը), ապա անհրաժեշտ է լինելու լրացնել հիմնավորումը և այլն:

Բոլոր սահմանված ստուգումները Համակարգի կողմից իրականացվելուց հետո գնումների պլանը հասանելի է լինելու ՀՀ ՖՆ գնումների քաղաքականության վարչության համար, ում կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում հաստատվելու է պլանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի դեպքում (այսուհետ՝ 15/6) առաջարկվում է ԳՄԱ կողերը ներառել բյուջետային հայտերի վերջնական ներկայացման փուլում՝ պայմանագիրը կնքված լինելու դեպքում:

**Ցանկացած փոփոխություն բյուջետավորման մոդուլում պետք է արտացոլվի Գնումների մոդուլում:*

Գնումների պլանի հաստատումից և հրապարակումից հետո պետական մարմինը ըստ անհրաժեշտության կարող է ավելացնել նոր գնման առարկաներ կամ իրականացնել փոփոխություններ գնումների պլանում:

Նշված գործընթացի իրականացումը առաջարկվում է սկսել Բյուջետավորման մոդուլից. Գնումների պլանում ցանկացած փոփոխություն իրականացնելու համար անհրաժեշտ է փոփոխություն իրականացնել բյուջետավորման մոդուլում, սակայն եթե գնումների մոդուլում սկսվել է գնման գործընթաց որևէ չափաբաժնի /լոտի/ մասով, ապա գնումների պլանի նշված տողը


	Համակարգի կողմից ապակտիվացվում է՝ թույլ չտալով բյուջետավորման մոդուլին իրականացնել վերաբաշխումներ: Սա կարող է լինել օպտիմալացման լավագույն տարբերակը նշված գործընթացի համար՝ ապահովելով տվյալների ինքնաշխատ փոխանակումը ԿՖԿՏՀ անհրաժեշտ մոդուլների միջև:
Հղում առկա գործընթացին	Գ1-Գնումների պլանավորում, պետական մարմինների կողմից գնումների պլանի կազմում և ներկայացում ՀՀ ֆինանսների նախարարություն, տվյալների ստուգում, հաստատում, հրապարակում Գ2-Այլ մարմինների կողմից գնումների պլանի կազմում և հրապարակում PPCM համակարգում Գ3-Գնումների պլանում փոփոխությունների կատարում, հաստատում Գ4-Այլ մարմինների կողմից գնումների պլանում փոփոխությունների իրականացում Գ11-Գնման գործընթացների վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված տեղեկությունների հրապարակում տեղեկագրում
Տիրույթ	Պետական կառավարման մարմին, ՀՀ ֆինանսների նախարարություն (Բյուջետավորում, Գնումներ)
Դերակատարներ	Պետական մարմնի աշխատակից, ՀՀ ֆինանսների նախարարության գնումների քաղաքականության և բյուջետային գործընթացի կազմակերպման վարչություններ
Մուտքային տվյալներ	Բ1
Ելքային տվյալներ	Գ1, Գ6, Գ7.1

3.2 Մրցույթի պլանավորում

Մրցույթի պլանավորման գործընթացն իրականացվում է հետևյալ հաջորդականությամբ.


- Գնման ընթացակարգի նախապատրաստում, պատասխանատու ստորաբաժանման և մրցույթի քարտուղարի ընտրություն
- Գնման առարկաների աշխատակարգային տվյալների լրացում
- Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կազմի ընտրություն
- Հրավերի գներացում և հրապարակում
- Պարզաբանման հարցումների տրամադրում

- Հրավերի բողոքարկում
- Հրավերի փոփոխություն



Գործընթացների մանրամասն նկարագրությունը ներկայացված է հաջորդ բաժիններում:

3.2.1 Գնման ընթացակարգի նախապատրաստում




Նպատակ	Գնման ընթացակարգի նախապատրաստում, պատասխանատու ստորաբաժանման և մրցույթի քարտուղարի ընտրություն, ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կազմի ընտրություն, հրավերի հրապարակում
Նկարագրություն/ Ընթացք	Մրցույթի պլանավորման մոդուլի աշխատանքների օպտիմալացման նախապայման է հանդիսանում

	<p>համապատասխան դերերով օգտվողների⁹, խմբերի առկայությունը (Օրինակ՝ Պատվիրատուի ղեկավար, Պատվիրատու ստորաբաժանման ղեկավար, մրցույթի քարտուղար և այլն):</p> <p>Անհրաժեշտ աշխատակիցների առկայության դեպքում սահմանվում են ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամները, պատասխանատու ստորաբաժանման աշխատակցի կողմից ձևավորվում է գնման հայտը համապատասխան ձևաչափով, հայտը հաստատվում է ՊՍ և պատվիրատուի ղեկավարների կողմից, ինչից հետո հրավերը «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետներում մրցույթի քարտուղարի կողմից հրապարակվում է Տեղեկատվական պորտալում, ինչի մասին տեղեկացվում են նաև բոլոր շահագրգիռ անձանց:</p>
Հղում առկա գործընթացին	<p>Գ5-Գնման ընթացակարգի նախապատրաստում PPCM համակարգում</p> <p>Գ6-Գնման ընթացակարգի նախագծում և հրապարակում ARMEPS համակարգում բոլոր գնման ընթացակարգերի համար</p> <p>Գ18-Էլեկտրոնային աճուրդով գնումներ իրականացնելու դեպքում գնման հայտի նախագծում, համաձայնեցում, ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ստեղծում, հայտարարության և հրավերի հրապարակում</p> <p>Գ11-Գնման գործընթացների վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված տեղեկությունների հրապարակում տեղեկագրում</p>
Տիրույթ	Գնումների մոդուլ, մրցույթի պլանավորում ենթամոդուլ, տեղեկատվական պորտալ
Դերակատարներ	Պատվիրատուի ղեկավար (ՊՂ), պատասխանատու ստորաբաժանման (ՊՍ) ղեկավար, ՊՍ աշխատակից, մրցույթի քարտուղար
Մուտքային տվյալներ	Գ1
Ելքային տվյալներ	Գ2, Գ6, Գ7.2

⁹ Մանրամասն նկարագրությունը ներկայացված է «ԿՖԿՏՀ Ներդրման Մոդել» փաստաթղթի Օգտվողների կառավարման մոդուլ բաժնում:


3.2.2 Պարզաբանման հարցումների տրամադրում



Նպատակ	Գնման ընթացակարգի վերաբերյալ պարզաբանման հարցումների ներկայացում, հարցումների տրամադրում, հրապարակում
Նկարագրություն/Ընթացք	<p>Մասնակիցներն իրավունք ունեն «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում:</p> <p>Առաջարկվող գնումների համակարգում սահմանված ժամկետում հարցում կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվելու է «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում և ժամկետում, ընդ որում գործընթացի օպտիմալացման համար առաջարկվում է հարցումը ներկայացրած մասնակցի տվյալների ցուցադրման գաղտնիության սահմանում:</p> <p>Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկատվական պորտալում սահմանված ժամկետում, առանց նշելու հարցումը</p>

	<p>կատարած մասնակցի տվյալները, իսկ փակ մրցույթի դեպքում հարցման և պարզաբանումների բովանդակության մասին պարզաբանումը տրամադրվում է հրավեր ստացած մասնակիցներին:</p> <p>Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից:</p> <p>Հարցմանը «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում պարզաբանում չտրամադրելու դեպքում, Համակարգի կողմից ինքնաշխատ ապակտիվացվելու է գնման գործընթացը մինչ պարզաբանում տրամադրելը:</p>
<p>Հղում առկա գործընթացին</p>	<p>Գ7-ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով գնման ընթացակարգին մասնակցության դեպքում պարզաբանման հարցումների տրամադրում</p> <p>Գ11-Գնման գործընթացների վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված տեղեկությունների հրապարակում տեղեկագրում</p> <p>Գ18-էլեկտրոնային աճուրդով գնումներ իրականացնելու դեպքում գնման հայտի նախագծում, համաձայնեցում, ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ստեղծում, հայտարարության և հրավերի հրապարակում</p>
<p>Տիրույթ</p>	<p>Գնումների մոդուլ, մրցույթի պլանավորում ենթամոդուլ, տեղեկատվական պորտալ</p>
<p>Դերակատարներ</p>	<p>Պատվիրատու, մասնակից, շահագրգիռ անձ</p>
<p>Մուտքային տվյալներ</p>	<p>Գ1</p>
<p>Ելքային տվյալներ</p>	<p>Գ6, Գ7.3</p>

3.2.3 Հրավերի բողոքարկում




Նպատակ	Հրավերի բողոքարկում՝ փոփոխություն իրականացնելու նպատակով
Նկարագրություն /Ընթացք	<p>«Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում մասնակիցների կողմից կարող է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը դատական կարգով բողոքարկվել գնման առարկայի բնութագրերը, նախատրակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները:</p> <p>Բողոքարկումը դատարանի կողմից բավարարվելու դեպքում պատվիրատուի կողմից իրականացվելու է հրավերի փոփոխություն¹⁰: Դատարանի կողմից վարույթ սկսելու դեպքում, գնման ընթացակարգ կասեցվում է մինչև դատարանի համապատասխան որոշման առկայությունը:</p>
Հղում առկա գործընթացին	Գ18-Էլեկտրոնային աճուրդով գնումներ իրականացնելու դեպքում գնման հայտի նախագծում, համաձայնեցում, ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ստեղծում, հայտարարության և հրավերի հրապարակում
Տիրույթ	Գնումների մոդուլ, Մրցույթի պլանավորման ենթամոդուլ, արտաքին համակարգ/դատարան

¹⁰ Գործընթացը մանրամասն ներկայացված է «Հրավերի փոփոխություն» բաժնում:

Դերակատարներ	Պատվիրատու, մասնակից, դատարան
Մուտքային տվյալներ	Գ1
Ելքային տվյալներ	Գ6

3.2.4 Հրավերի փոփոխություն



Նպատակ	Հրավերի փոփոխության իրականացում, հրապարակում
--------	--


Նկարագրություն/Ընթացք	«Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում և ժամկետում հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Փոփոխությունները կատարելուց և հանձնաժողովի անդամների կողմից հաստատվելուց հետո փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարությունը հրապարակվում է (փակ մրցույթի դեպքում փոփոխությունները տրամադրվում են հրավեր ստացած մասնակիցներին սահմանված ժամկետներում) Տեղեկատվական պորտալում, ինչպես նաև ուղարկվում է մասնակիցներին և շահագրգիռ անձանց:
Հղում առկա գործընթացին	Գ6-Գնման ընթացակարգի նախագծում և հրապարակում ARMEPS համակարգում բոլոր գնման ընթացակարգերի համար Գ11-Գնման գործընթացների վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված տեղեկությունների հրապարակում տեղեկագրում Գ18-Էլեկտրոնային աճուրդով գնումներ իրականացնելու դեպքում գնման հայտի նախագծում, համաձայնեցում, ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ստեղծում, հայտարարության և հրավերի հրապարակում
Տիրույթ	Գնումների մոդուլ, մրցույթի պլանավորման ենթամոդուլ, տեղեկատվական պորտալ
Դերակատարներ	Պատվիրատու, մասնակից, շահագրգիռ անձ
Մուտքային տվյալներ	Գ1
Ելքային տվյալներ	Գ7.4

3.3 Մրցույթ


Մրցույթի պլանավորման աշխատանքների ավարտից հետո կախված «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերի, տվյալները փոխանցվում են «Մրցույթ»-ի ենթամոդուլ:

Մրցույթը իրականացվում է հետևյալ հաջորդականությամբ.

- Հայտերի ներկայացում
- Ստացված հայտերի բացում և գնահատում
- Գնահատման արդյունքների ամփոփում, հայտարարությունների հրապարակում, անգործության ժամկետի սահմանում և բողոքարկում




3.3.1 Հայտերի ներկայացում



Նպատակ	Մասնակիցների կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացում
Նկարագրություն/ Ընթացք	Սահմանված ժամկետում մասնակիցները, ովքեր ներառված չեն «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների» ցանկում, կարող են Համակարգում դիմել

	<p>«Հրապարակված» կարգավիճակ ունեցող մրցույթներին՝ ներկայացնելով անհրաժեշտ փաստաթղթերը: Մասնակիցների կողմից իրականացվում է հրավերով նախատեսված փաստաթղթերի մուտքագրում, նախադիտում, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում խմբագրում և սահմանված ժամկետում հաստատում:</p> <p>Փաթեթը Համակարգում հաջող մուտքագրվելուց հետո մասնակցին, պատվիրատուին, ինչպես նաև ՀՀ ՖՆ գնումների քաղաքականության վարչությանը հաղորդագրություն է ուղարկվում հայտի փաթեթի ներբեռնման վերաբերյալ համապատասխան տեղեկատվությամբ:</p>
Հղում առկա գործընթացին	Գ8-Մասնակիցների գրանցում ARMEPS համակարգում Գ20-Էլեկտրոնային աճուրդների համակարգում մասնակիցների կողմից հայտերի ներկայացում, արձանագրված անհամապատասխանությունների շտկում, պայմանագրի կնքում
Տիրույթ	Գնումների մոդուլ, Մրցույթի ենթամոդուլ, ԷԱՃ-ի ենթամոդուլ
Դերակատարներ	Մասնակիցներ, պատվիրատու
Մուտքային տվյալներ	Գ2, ՄԿ1, ԱՏ1
Ելքային տվյալներ	Գ6


3.3.2 Ստացված հայտերի գնահատում



Նպատակ	Ստացված հայտերի բացում, շտկում, գնահատում, անհրաժեշտության դեպքում օրենքով սահմանված կարգով և ժամկետներում բանակցությունների իրականացում
Նկարագրություն /Ընթացք	Հայտերի փաթեթների տրամադրման վերջնաժամկետից հետո հանձնաժողովի անդամների կողմից իրականացվում է ստացված հայտերի բացում և գնահատում: Հայտերի գնահատումից հետ, մասնակցին անհրաժեշտության դեպքում կարող է տրվել հնարավորություն «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում շտկելու թերությունները, իսկ հավասար կամ նախահաշվային գները գերազանցած գնառաջարկների դեպքում՝ հանձնաժողովը օրենքով սահմանված կարգով և ժամկետներում նախաձեռնում է բանակցություն:
Հղում առկա գործընթացին	Գ10-ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով ստացված հայտերի բացում, շտկում, գնահատում

Տիրույթ	Գնումների մոդուլ, Մրցույթի ենթամոդուլ
Դերակատարներ	Մասնակիցներ, պատվիրատու/ հանձնաժողովի անդամ, քարտուղար
Մուտքային տվյալներ	Գ2
Ելքային տվյալներ	Գ6


3.3.3 Գնահատման արդյունքների ամփոփում, հայտարարությունների հրապարակում, անգործության ժամկետի սահմանում և բողոքարկում




Նպատակ	Գնահատման արդյունքների ամփոփում, հայտարարությունների հրապարակում, անգործության ժամկետի սահմանում և բողոքարկում
Նկարագրություն /Ընթացք	<p>Մասնակիցների դասակարգման վերջնականացումից հետո իրականացվում է հայտերի գնահատման արդյունքների ու պայմանագիր կնքելու մասին, կամ ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշման հրապարակում՝ պահպանելով «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված անգործության ժամկետը:</p> <p><i>Մեկ մասնակցի դեպքում, եթե այն ընտրված մասնակից է, անգործության ժամկետ չի սահմանվում և գնման արդյունքները հրապարակվում են:</i></p> <p>Օրենքով սահմանված անգործության ժամկետը լրանալուց պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, ըստ անհրաժեշտության՝ առանձին կամ խմբավորված չափաբաժինների համար:</p> <p>Անգործության ավարտից հետո մասնակիցների կողմից, նախքան պայմանագրի կնքումը, հնարավոր է դատական կարգով բողոքարկել պատվիրատուի կամ/և գնահատող հանձնաժողովի գործողությունները:</p>
Հղում առկա գործընթացներին	<p>Գ10-ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով ստացված հայտերի բացում, շտկում, գնահատում</p> <p>Գ19– E-auction էլեկտրոնային աճուրդների համակարգի միջոցով գնման ընթացակարգին մասնակցության դեպքում ստացված հայտերի գնահատում, անգործություն, պայմանագրի շնորհում, պայմանագրի կնքում, ընթացակարգի ամփոփում, ծանուցումներ</p> <p>Գ11-Գնման գործընթացների վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված տեղեկությունների հրապարակում տեղեկագրում</p>
Տիրույթ	Գնումների մոդուլ, Մրցույթի ենթամոդուլ, տեղեկատվական պորտալ, արտաքին համակարգ
Դերակատարներ	Մասնակիցներ, պատվիրատու
Մուտքային տվյալներ	Գ2, ՄԿ1, ԱՏ1, ԱՀ2

3.4 Էլեկտրոնային աճուրդ

Մրցույթի նախագծման գործընթացների ավարտից հետո կախված «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերի, տվյալները փոխանցվում են «Էլեկտրոնային աճուրդ»-ի ենթամոդուլ:



ԷԱՃ-ով գնման ընթացակարգն իրականացվում է հետևյալ հաջորդականությամբ.



3.4.1 Հայտերի ներկայացում


Գործընթացի նկարագրությունը ներկայացված է 3.3.1 «Հայտերի ներկայացում» բաժնում:

3.4.2 Էլեկտրոնային աճուրդի իրականացում

Հայտերի ընդունման սահմանված ժամկետի ավարտից հետո մրցույթների կարգավիճակը փոխվում է, և ինքնաշխատ բացվում է առցանց աճուրդի էջը, որտեղ մասնակիցները կարող են կատարել գնառաջարկներ իրենց դիմած չափաբաժինների համար:


ԷԱՃ-ի օպտիմալ իրականացման համար առաջակցվում է 3 տարբերակ.

Տարբերակ 1: Փուլային սկզբունքով իրականացվող Էլեկտրոնային աճուրդ (3 փուլ)



Նպատակ	Փուլային սկզբունքով իրականացվող Էլեկտրոնային աճուրդ
Նկարագրություն /Ընթացք	<p>Առաջին փուլ: Նշվում է փուլի անցկացման ժամանակահատվածը: Մասնակիցները ներկայացնում են իրենց գնային առաջարկները, որից հետո Համակարգը ֆիքսում է բոլոր առաջարկները: Այնուհետև հայտարարվում է դադար մինչև մյուս փուլի սկիզբ: Մասնակիցները կարող են տեսնել իրենց գրադեցրած տեղը:</p> <p>Երկրորդ փուլ: Առաջին փուլի արդյունքների հիման վրա եթե աճուրդի տեսակը գնի իջեցումն է, ապա առաջինը գնային առաջարկ ներկայացնում է ամենաբարձր գին նշած մասնակիցը, իսկ եթե աճուրդի տեսակը գնի բարձրացումն է, ապա ամենացածր գին նշած մասնակիցը: Որից հետո գնային առաջարկները ներկայացնում են մյուս մասնակիցները՝ ըստ հերթականության: Այնուհետև, մինչև մյուս փուլի սկիզբը հայտարարվում է դադար: Մասնակիցները կարող են տեսնել իրենց գրադեցրած տեղը:</p> <p>Երրորդ փուլ: Երրորդ փուլը անցկացվում է նույնությամբ:</p>
Հղում առկա գործընթացներին	Գ17– Էլեկտրոնային աճուրդների իրականացման կարգը և օգտվողների (users) կառավարումը
Տիրույթ	Գնումների մոդուլ, ԷԱՃ-ի ենթամոդուլ
Դերակատարներ	Մասնակիցներ, պատվիրատու
Մուտքային տվյալներ	Գ2, ՄԿ1, ԱՏ1, Ա22
Ելքային տվյալներ	Գ3, Գ6, Գ7


Տարբերակ 2: Ժամային սկզբունքով իրականացվող Էլեկտրոնային աճուրդ



Նպատակ	Ժամային սկզբունքով իրականացվող Էլեկտրոնային աճուրդ
Նկարագրություն/ Ընթացք	<p>Առաջին փուլ: Էլեկտրոնային աճուրդի ընդհանուր տևողությունը սահմանվում է 30 րոպե: Աճուրդի ընթացքում կատարվող յուրաքանչյուր քայլի արդյունքում նվազեցվող գումարը չպետք է պակաս լինի աճուրդը սկսելու պահին ներկայացված նվազագույն գնային առաջարկի 1 տոկոսից: Եթե աճուրդի ընդհանուր տևողության ընթացքում որևէ քայլ կատարելու պահից հաշված 5-րդ րոպեն լրանալը չի կատարվում նոր քայլ, ապա աճուրդը համարվում է ամփոփված, և վերջին քայլը կատարած մասնակիցը համարվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:</p> <p>Երկրորդ փուլ: Առաջին փուլի արդյունքների ամփոփումից և ընտրված մասնակից հայտարարելուց հետո, Համակարգը հնարավորություն է ընձեռում մյուս մասնակիցներին սահմանված ժամկետում (օրինակ՝ 2 րոպեի ընթացքում) ներկայացնել իրենց վերջնական գնային առաջարկը (1 անգամ), որը պետք է ցածր լինի հակադարձ աճուրդում իրենց ներկայացրած վերջնական գնառաջարկից և բարձր կամ հավասար առաջին տեղը զբաղեցրած մասնակցի գնային առաջարկից:</p> <p>Եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը գնահատվում է անբավարար կամ վերջինս հետ պայմանագիր չի կնքվում, ապա հաջորդ ցածր գին ներկայացրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, իսկ մյուս մասնակիցների հայտերը մերժվում են:</p>
Հղում առկա գործընթացներին	Գ17– Էլեկտրոնային աճուրդների իրականացման կարգը և օգտվողների (users) կառավարումը

Տիրույթ	Գնումների մոդուլ, ԷԱՃ-ի ենթամոդուլ
Դերակատարներ	Մասնակիցներ, պատվիրատու
Մուտքային տվյալներ	Գ2, ՄԿ1, ԱՏ1, ԱՀ2
Ելքային տվյալներ	Գ3, Գ6, Գ7


Տարբերակ 3: Էլեկտրոնային աճուրդի գործընթաց, որը տեղի է ունենում ժամային սկզբունքով.



Նպատակ	Ժամային սկզբունքով իրականացվող Էլեկտրոնային աճուրդ
Նկարագրություն /Ընթացք	<p>Էլեկտրոնային աճուրդի ընթացքում կատարվող յուրաքանչյուր քայլի արդյունքում նվազեցվող գումարը չպետք է պակաս լինի աճուրդը սկսելու պահին ներկայացված նվազագույն գնային առաջարկի 1 տոկոսից: Բոլոր մասնակիցների գնառաջարկները ինքնաշխատ եղանակով արտացոլվում են:</p> <p>Նոր գնառաջարկ ներկայացնելու համար մասնակցին տրվում է սահմանված ժամկետ (Օրինակ՝ 3 րոպե): 3 րոպե անգործությունից հետո, եթե ոչ մի մասնակից գնառաջարկ չի ներկայացնում, ապա այդ չափաբաժնի մասով աճուրդն ավարտվում է, և վերջին քայլը կատարած մասնակիցը համարվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:</p>
Հղում առկա գործընթացներին	Գ17– Էլեկտրոնային աճուրդների իրականացման կարգը և օգտվողների (users) կառավարումը

Տիրույթ	Գնումների մոդուլ, ԷԱՃ-ի ենթամոդուլ
Դերակատարներ	Մասնակիցներ, պատվիրատու
Մուտքային տվյալներ	Գ2, ՄԿ1, ԱՏ1, ԱՀ2
Ելքային տվյալներ	Գ3, Գ6, Գ7

3.4.3 Ստացված հայտերի գնահատում



Նպատակ	Ստացված հայտերի բացում, շտկում, գնահատում
Նկարագրություն /Ընթացք	Հանձնաժողովի անդամները գնահատում են հակադարձ աճուրդի ընթացքում ըստ չափաբաժինների ընթացակարգի գնման գնի նախապայմանին բավարարած մասնակիցների հայտի փաթեթները և ստուգում դրանց համապատասխանությունը հրավերի պահանջներին: Հայտերի գնահատումից հետո, մասնակիցներին անհրաժեշտության դեպքում կարող է տրվել հնարավորություն «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում շտկելու թերությունները:

Հղում առկա գործընթացին	Գ19– E-auction էլեկտրոնային աճուրդների համակարգի միջոցով գնման ընթացակարգին մասնակցության դեպքում ստացված հայտերի գնահատում, անգործություն, պայմանագրի շնորհում, պայմանագրի կնքում, ընթացակարգի ամփոփում, ծանուցումներ
Տիրույթ	Գնումների մոդուլ, ԷԱՃ-ի ենթամոդուլ
Դերակատարներ	Մասնակիցներ, պատվիրատու/ հանձնաժողովի անդամ, քարտուղար
Մուտքային տվյալներ	Գ2
Ելքային տվյալներ	Գ6, Գ3

3.4.4 Գնահատման արդյունքների ամփոփում, հայտարարությունների հրապարակում, անգործության ժամկետի սահմանում և բողոքարկում


Գործընթացի մանրամասն նկարագրությունը ներկայացված է 3.3.3 «Գնահատման արդյունքների ամփոփում, հայտարարությունների հրապարակում, անգործության ժամկետի սահմանում և բողոքարկում» բաժնում:

3.5 Գնումների պայմանագրերի կառավարում

Մրցույթի և ԷԱՃ-ի արդյունքների ամփոփումից և հաղթողի ընտրությունից հետո պայմանագրի շնորհման արդյունքները փոխանցվում են Գնումների պայմանագրերի կառավարման ենթամոդուլ, որտեղ սկսվում է պայմանագրի կառավարման գործառույթը:

Մեկ անձից գնում կատարելու ընթացակարգի դեպքում մասնակիցների տվյալները, գնային առաջարկները, պայմանագրի շնորհման արդյունքներն, ինչպես նաև այլ տվյալներ ինքնաշխատ տեղափոխվում են «Մրցույթի պլանավորման» ենթամոդուլից:

3.5.1 Պայմանագրի շնորհում



Նպատակ	Ընտրված մասնակցի պայմանագրի շնորհման գործընթացի կազմակերպում
Նկարագրություն/Ընթացք	<p>Մրցույթի քարտուղարի կողմից հայտերի գնահատման արդյունքների ամփոփումից հետո, տեղեկատվական պորտալում հրապարակվում է «Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը»:</p> <p>Անգործությունից¹¹ հետո ընտրված մասնակցին տրամադրվում է պայմանագրի նախագիծը և իրականացվում է պայմանագրի շնորհման փուլը:</p>
Հղում առկա գործընթացներին	<p>Գ10–ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով ստացված հայտերի բացում, շտկում, գնահատում</p> <p>Գ20-Eauction էլեկտրոնային աճուրդների համակարգում մասնակիցների կողմից հայտերի ներկայացում, արձանագրված անհամապատասխանությունների շտկում, պայմանագրի կնքում</p>

¹¹ Մանրամասները նկարագրված են «3.3.3 Գնահատման արդյունքների ամփոփում, հայտարարության հրապարակում, անգործության ժամկետի սահմանում և բողոքարկում» բաժնում

	Գ11-Գնման գործընթացների վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված տեղեկությունների հրապարակում տեղեկագրում
Տիրույթ	Գնումների մոդուլ, գնումների պայմանագրերի ենթամոդուլ, տեղեկատվական պորտալ
Դերակատարներ	Մասնակից, պատվիրատու
Մուտքային տվյալներ	Գ2, Գ3, Գ4
Ելքային տվյալներ	Գ5, Գ6, Գ7

3.5.2 Պայմանագրի ապահովումների ներկայացում /տուժանք, կանխիկ փող, բանկային երաշխիք/

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետներում մասնակիցը ներկայացնում է հայտի ապահովում: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի, բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:


Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Մասնակիցը վճարում է հայտի ապահովումը, եթե նա 1) հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից, 2) խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը

3.5.2.1 Բանկային երաշխիքների ներկայացում

Գործընթացի օպտիմալ իրականացման համար առաջակվում է 2 տարբերակ.


Տարբերակ 1:



Նպատակ	Բանկային երաշխիքների թողարկում համակարգում
Նկարագրություն/ Ընթացք	<p>Պայմանագրի ապահովման տրամադրումը առևտրային բանկերի կողմից իրականացվում է էլեկտրոնային տարբերակով անմիջապես համակարգում: Նոր բանկային երաշխիք ստանալու բանավոր կամ գրավոր դիմումի առկայության դեպքում առևտրային բանկի կողմից, անձին նույնականացնելու միջոցով, համակարգում տրամադրվում է բանկային երաշխիք սահմանված ձևաչափով: Գործընթացի իրականացման նախապայման է հանդիսանում բանկի համապատասխան աշխատակիցների առկայությունը համակարգում /օրինակ՝ 2 օգտատեր՝ հայտ ստեղծող, հայտ հաստատող/:</p> <p>Մասնակցի կողմից բանկային երաշխիքը ստանալու դեպքում իրականացվում է առցանց ստորագրում և ներկայացում պատվիրատուին:</p> <p><u>Թերություններ:</u> Գործընթացի իրականացման դեպքում հնարավոր են մի շարք խնդիրներ, մասնավորապես.</p> <ul style="list-style-type: none"> • առևտրային բանկերի հետ համագործակցության խնդիր • տվյալների հարմոնիզացիայի խնդիր՝ միատեսակ տվյալների մուտքագրումը և՛ առևտրային բանկերի համակարգում, և՛ գնումների համակարգում
Հղում առկա գործընթացներին	Գ8-Մասնակիցների գրանցում ARMEPS համակարգում

	Գ20-Էլեկտրոնային աճուրդների համակարգում մասնակիցների կողմից հայտերի ներկայացում, արձանագրված անհամապատասխանությունների շտկում, պայմանագրի կնքում
Տիրույթ	Գնումների մոդուլ, պայմանագրերի կառավարման ենթամոդուլ, արտաքին համակարգեր
Դերակատարներ	Պատվիրատու, մասնակից, առևտրային բանկի աշխատակից
Մուտքային տվյալներ	Գ4, Գ3, ԱՏ1
Ելքային տվյալներ	Գ6


Տարբերակ 2:



Նպատակ	Բանկային երաշխիքների տրամադրում
Նկարագրություն /Ընթացք	Նոր բանկային երաշխիք ստանալու բանավոր կամ գրավոր դիմումի առկայության դեպքում առևտրային բանկի կողմից, անձին նույնականացնելու միջոցով, թողարկվում է հայտի/պայմանագրի ապահովումը համապատասխան ձևաչափով (օրինակ՝ PDF): Մասնակիցը համակարգի միջոցով բանկային երաշխիքը ներկայացնում է պատվիրատուին: <i>*Արտերկրում գտնվող բանկերի կողմից թողարկված ապահովումները պետք է մուտքագրվեն Համակարգ սկանավորված տարբերակով:</i>

Հղում առկա գործընթացներին	Գ8-Մասնակիցների գրանցում ARMEPS համակարգում Գ20-Էլեկտրոնային աճուրդների համակարգում մասնակիցների կողմից հայտերի ներկայացում, արձանագրված անհամապատասխանությունների շտկում, պայմանագրի կնքում
Տիրույթ	Գնումների մոդուլ, պայմանագրերի կառավարման ենթամոդուլ, արտաքին համակարգեր/բանկեր
Դերակատարներ	Պատվիրատու, մասնակից, առևտրային բանկ
Մուտքային տվյալներ	Գ4, Գ3, ԱՏ1
Ելքային տվյալներ	Գ6

3.5.2.2 Կանխիկ փողի ձևով ներկայացված պայմանագրի ապահովում




Նպատակ	Հայտի ապահովման ներկայացվում կանխիկ փողի տարբերակով
--------	---

Նկարագրություն /Ընթացք	Օրենքով սահմանված տուժանքի կամ կանխիկ փողի տարբերակում կանխիկ գումարը ՀՀ ՖՆ գանձապետարանի հաշվեհամարին մուտքագրելու դեպքում, մասնակիցը վճարումը հիմնավորող փաստաթղթերը մուտքագրում է Համակարգ: Տվյալների ինքնաշխատ ստուգում է իրականացվում ՀՀ ՖՆ գանձապետական ծրագրի անհրաժեշտ տվյալների հետ:
Հղում առկա գործընթացներին	Գ8-Մասնակիցների գրանցում ARMEPS համակարգում Գ20-Էլեկտրոնային աճուրդների համակարգում մասնակիցների կողմից հայտերի ներկայացում, արձանագրված անհամապատասխանությունների շտկում, պայմանագրի կնքում
Տիրույթ	Գնումների մոդուլ, պայմանագրերի կառավարման ենթամոդուլ, արտաքին համակարգեր
Դերակատարներ	Պատվիրատու, մասնակից, Գանձապետական մոդուլ
Մուտքային տվյալներ	Գ4, Գ3, US1
Ելքային տվյալներ	Գ6

3.5.3 Կնքված պայմանագրերի հաշվառում, հայտարարության հրապարակում

Ըստ չափաբաժինների պայմանագրի շնորհման արդյունքները փոխանցվում են Պայմանագրերի կառավարման ենթամոդուլ, որտեղ իրականացվում է կնքված պայմանագրի մուտքագրման և մրցույթի հաշվետվության լրացման գործառույթները:


**Մեկ անձից գնում կատարելու ընթացակարգի դեպքում մասնակիցների տվյալները, գնային առաջարկները, պայմանագրի շնորհման արդյունքներն, ինչպես նաև այլ տվյալներ ինքնաշխատ տեղափոխվում են «Մրցույթի պլանավորման» ենթամոդուլից:*



Նպատակ	Կնքված պայմանագրերի/համաձայնագրերի և մրցույթի հաշվետվության հաշվառում, կնքված պայմանագրի մասին հայտարարության հրապարակում
Նկարագրություն/ Ընթացք	<p>Պայմանագիր կնքելու վերաբերյալ տեղեկատվությունը համապատասխան ձևաչափով պատվիրատուն առանց էլեկտրոնային թվային ստորագրության Համակարգի միջոցով ուղարկում է մասնակցին:</p> <p>Մասնակցի կողմից պայմանագիրը ստորագրվելուց հետո, վերջինս ստորագրվում է նաև պատվիրատուի կողմից:</p> <p>Պայմանագիրը Պատվիրատուի ղեկավարի կողմից ստորագրվելուց հետո իրականացվում է նաև հաշվառում ՀՀՀՀ մոդուլի հետ և հրապարակվում է տեղեկատվական պորտալում:</p> <p>Պատասխանատու ստորաբաժանումը հնարավորություն ունի պայմանագրի կատարման փուլում, կախված մասնակցի կողմից աշխատանքների իրականացման որակից, պայմանագրի շրջանակում այլ համաձայնագիր կնքելու վերաբերյալ առաջարկ ներկայացնելու:</p> <p><i>*Գնումների մասին օրենսդրության և/կամ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի փոփոխություններով պայմանավորված հնարավոր է որոշակի չափորոշիչների փոփոխություն:</i></p>


Հղում առկա գործընթացին	Գ12-Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի և մրցույթի հաշվետվության մուտքագրում PPCM համակարգ Գ11-Գնման գործընթացների վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված տեղեկությունների հրապարակում տեղեկագրում
Տիրույթ	Գնումների մոդուլ, պայմանագրերի կառավարման ենթամոդուլ, տեղեկատվական պորտալ, ՀՀՀՀ
Դերակատարներ	Մասնակից, պատվիրատու
Մուտքային տվյալներ	Գ2, Գ3, Գ4
Ելքային տվյալներ	Գ5, Գ7, Գ6

3.5.4 Հանձնման-ընդունման իրականացում, հաշիվ-ապրանքագրերի ներկայացում



Նպատակ	Հանձնման ընդունման փաստաթղթերի, հաշիվ ապրանքագրերի ներկայացում պատվիրատուին, տվյալների փոխանցում ՀՀՀՀ մոդուլ
Նկարագրություն /Ընթացք	Ծառայությունները մատուցելուց հետո մատակարարը հաշիվ-ապրանքագիրը, Օրենքով սահմանված փաստաթղթերը Համակարգի միջոցով ուղարկում է պատվիրատուին: Պատվիրատուի ՊՄ ղեկավարի կողմից (ով մրցույթի ստեղծման փուլում ընտրվել է որպես ՊՄ աշխատակից/աշխատակիցներ) եզրակացությունը (դրական, բացասական) ստորագրվում/հաստատվում է և համապատասխան ընթացակարգով ներկայացվում է պատվիրատուի ղեկավարին: Պատվիրատուի ղեկավարը առարկություններ չունենալու դեպքում ավարտված հանձնման-ընդունման փաստաթղթերը փոխանցում է ՀՀՀՀ մոդուլ, որը հասանելի է անհրաժեշտ ԿՖԿՏՀ մոդուլներին, օրինակ՝ Գանձապետարան, Հանրային Հատվածի Հաշվապահության մոդուլ:
Հղում առկա գործընթացին	Գ13-Մասնակիցների կողմից հանձնման-ընդունման արձանագրության ներկայացում
Տիրույթ	Գնումների մոդուլ, պայմանագրերի կառավարման ենթամոդուլ, ՀՀՀՀ, մասնակիցների կառավարման մոդուլ
Դերակատարներ	Մատակարար, պատվիրատու, ՀՀ ՖՆ աշխատակից
Մուտքային տվյալներ	Գ2, Գ3, Գ4
Ելքային տվյալներ	Գ5, Գ7, Գ6

3.6 Մեկ անձից իրականացվող գնման ընթացակարգեր





Նպատակ	Մեկ անձից իրականացվող գնման ընթացակարգերի նկարագրություն, պայմանագրի կնքում, հրապարակում
Նկարագրություն /Ընթացք	Մեկ անձից իրականացվող գնման ընթացակարգերը «Մրցույթի պլանավորման» ենթամոդուլում ¹² նախագծվելուց հետո «Մրցույթ» ն/կամ «ԷԱՃ» ենթամոդուլ չեն տեղափոխվում, «Պլանավորման» ենթամոդուլում տվյալ մրցույթի կարգավիճակը փոխվում է, և պատվիրատուն մասնակցին ուղարկում է պայմանագրի նախագիծը ¹³ : Պայմանագիրը հաստատելուց հետո այն տեսանելի է դառնում տեղեկատվական պորտալում:
Հղում առկա գործընթացին	Գ9-PPCM համակարգում թղթային տարբերակով իրականացվող գնման ընթացակարգեր Գ11-Գնման գործընթացների վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված տեղեկությունների հրապարակում տեղեկագրում
Տիրույթ	Գնումների մոդուլ, մրցույթի պլանավորման ենթամոդուլ, մեկ անձ ենթամոդուլ, պայմանագրերի կառավարման ենթամոդուլ
Դերակատարներ	Պատվիրատու, մասնակից
Մուտքային տվյալներ	Գ1, ԱՏ1, ՄԿ1
Ելքային տվյալներ	Գ2, Գ6, Գ7, Գ5

¹² Գործընթացը նկարագրված է «Մրցույթի նախագծում» բաժնում:

¹³ Գործընթացը նկարագրված է «Պայմանագրի շնորհում» բաժնում:


3.7 Դրամաշնորհի հատկացման ընթացակարգերի իրականացում



Նպատակ	Գնման ընթացակարգի իրականացում դրամաշնորհի հատկացման մրցույթների դեպքում
Նկարագրություն /Ընթացք	<p>Պետական բյուջեից դրամաշնորհների հատկացումների դեպքում Բյուջետավորման մոդուլում լրացվում է համապատասխան հոդվածը (Օրինակ՝ Այլ կապիտալ դրամաշնորհներ), նշվում է գնման ձևը՝ «Ուղիղ հատկացում» կամ «Մրցույթ», կող և այլն:</p> <p>Դրամաշնորհի հատկացման «Մրցույթ» տարբերակի դեպքում գործընթացներն իրականացվում են էլեկտրոնային համակարգերի միջոցով, իսկ դրամաշնորհային «Ուղիղ հատկացում»-ի (առանց մրցույթի) դեպքում իրականացվում են «Մեկ անձից» տարբերակով¹⁴:</p> <p>Դրամաշնորհի հատկացման դեպքում ընթացակարգը հնարավորություն է ընձեռում</p> <ul style="list-style-type: none"> • հրավերով նախատեսված հայտերով ներկայացված փաստաթղթերի միաժամանակյա բացում • մեկից ավել հաղթողների ընտրություն <p>Հաղթողի/հաղթողների ընտրության դեպքում սահմանված ժամկետում իրականացվում է պայմանագրի շնորհում, ինչից հետո հաղթող ճանաչված մասնակիցը կնքված պայմանագրի շրջանակում ներկայացնում է հաշվետվություն:</p> <p>Կազմակերպությունն ընդգրկվում է պետական բյուջեից դրամաշնորհ ստանալու նպատակով կազմակերպվող մրցույթին մասնակցելու իրավունք չունեցող կազմակերպությունների ցուցակում (այսուհետ՝ ցուցակ), եթե՝ 1) որպես հաղթող հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից. 2) խախտել է կնքված պայմանագրով ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պետական մարմնի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</p>
Հղում առկա գործընթացին	Գ16-Գնման ընթացակարգի իրականացում դրամաշնորհի հատկացման մրցույթների դեպքում
Տիրույթ	Գնումների մոդուլ, դրամաշնորհների հատկացում, պայմանագրերի կառավարման ենթամոդուլ
Դերակատարներ	Պատվիրատու, մասնակից, գնահատող հանձնաժողով, քարտուղար
Մուտքային տվյալներ	Գ1, ԱՏ1, ՄԿ1, ԱՀ2

¹⁴ Գործընթացը մանրամասն նկարագրված է «Մեկ անձից իրականացվող գնման ընթացակարգեր» բաժնում:


3.8 Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ընդգրկում և վարում



Նպատակ	Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների վերաբերյալ տվյալների ստացում, ցանկում ընդգրկում և վարում, տվյալների հրապարակում
Նկարագրություն /Ընթացք	<p>ՀՀ ՖՆ գնումների քաղաքականության վարչության աշխատակիցը (այդուհետև՝ Լիազոր մարմնի աշխատակից) պատվիրատուից ստանալով մասնակցին «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների» ցանկում ընդգրկելու պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը, «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում մուտքագրում է մասնակցի տվյալները¹⁵. անվանումը, ՀՎՀՀ/ՀԾՀ, գործունեության հասցեն, Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքերը, ցուցակում ներառելու ամսաթիվը /սկիզբ, ավարտ/:</p> <p>Մասնակցի տվյալները Համակարգում լրացնելու հաջորդ օրվանից մասնակցի գործունեությունը Համակարգում մասամբ սահմանափակվում է, մասնավորապես՝ մասնակիցը Օրենքով սահմանված ժամկետում իրավունք չի ունենում մասնակցելու որևէ նոր գնման ընթացակարգի:</p> <p>Մասնակիցը հնարավորություն է ունենում մինչև Ցանկում ներառվելը դիմած մրցութային ընթակարգերը շարունակել Համակարգում, ինչպես նաև կառավարել իր ընթացիկ պայմանագրերը: Տվյալները լրացնելուց և հաստատելուց հետո, Լիազոր մարմնի աշխատակիցը տվյալները հրապարակում է տեղեկատվական պորտալում:</p>
Հղում առկա գործընթացին	Գ24-Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ընդգրկում և վարում Գ11-Գնման գործընթացների վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված տեղեկությունների հրապարակում տեղեկագրում
Տիրույթ	Գնումների մոդուլ, մասնակիցների կառավարման մոդուլ
Դերակատարներ	Պատվիրատու, ՀՀ ՖՆ գնումների քաղաքականության վարչության աշխատակից
Մուտքային տվյալներ	ՄԿ1
Ելքային տվյալներ	Գ6, ՄԿ2

¹⁵ Եթե պատվիրատուի ղեկավարի որոշումը չի բողոքարկվում դատական կարգով:

3.9 Որակավորման շնորհման քննությանը մասնակցելու դիմումի ներկայացում



Նպատակ	Գնումների համակարգողների որակավորման շնորհման քննությանը մասնակցելու դիմումի ներկայացում, քննության մասնակցության հաստատում/մերժում
Նկարագրություն /Ընթացք	Գնումների համակարգողների որակավորման շնորհման քննությանը մասնակցելու համար դիմորդները, հավաստիանալով քննության ազատ օրերի մասին, Համակարգի միջոցով ներկայացնում են անհրաժեշտ-պարտադիր տեղեկատվությունը ՀՀ ՖՆ գնումների քաղաքականության վարչություն /այսուհետև՝ թեստավորման պատասխանատու/: Թեստավորման պատասխանատուի կողմից հրականացվում է տվյալների ստուգում և սահմանված ժամկետում մասնակցին քննությանը մասնակցելու թույլատվություն ունեցող անձանց ցուցակում ընդգրկելու, մերժելու կամ հայտը խմբագրելու դեպքում համապատասխան հաղորդագրության ուղարկում: Քննությանը մասնակցելու հաղորդագրությունը պարունակում է նաև Համակարգի կողմից ինքնաշխատ գեներացված լատինատառ սիմվոլներից և թվերից բաղկացած ունիկալ գաղտնաբառ: Դիմորդը, ստանալով քննությանը

	<p>մասնակցելու հրավերը, սահմանված ժամկետում հաստատում կամ մերժում է իր մասնակցությունը:</p> <p>Թեստավորման պատասխանատուն դիմորդների կողմից ներկայացված հայտերը ամբողջականացնելուց հետո քննության անցկացման վերաբերյալ տեղեկատվությունը Համակարգի միջոցով հրապարակում է անհրաժեշտ հրապարակային էջերում (օրինակ՝ տեղեկատվական պորտալ և ՀՀ ՖՆ պաշտոնական կայքում):</p>
Հղում առկա գործընթացին	<p>Գ25-Գնումների համակարգողների որակավորման շնորհման քննությանը մասնակցելու կարգ</p> <p>Գ27- Գնումների համակարգողի որակավորման շնորհման քննության կազմակերպում</p> <p>Գ11-Գնման գործընթացների վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված տեղեկությունների հրապարակում տեղեկագրում</p>
Տիրույթ	Գնումների մասնագետների կառավարման մոդուլ, Դիմումներ ենթամոդուլ
Դերակատարներ	Դիմորդ, Թեստավորման պատասխանատու
Մուտքային տվյալներ	-
Ելքային տվյալներ	ԳՄ1

3.9.1 Թեստավորում

Գնումների համակարգողների որակավորման շնորհման քննություն իրականացնելու համար անհրաժեշտ են հետևյալ գործընթացները.

- թեստի հարցաշարի ստեղծում
- թեստի ակտիվացում
- թեստի անցկացում

3.9.1.1 Թեստի հարցաշարի ստեղծում

Նպատակ	Գնումների համակարգողների որակավորման շնորհման քննության թեստի հարցաշարի ստեղծում
Նկարագրություն/ Ընթացք	Թեստավորման անցկացման համար թեստավորման պատասխանատուն Համակարգում սահմանված ժամկետում ստեղծում է հարցաշար կամ խմբագրում է Համակարգում առկա հարցաշարը: Հարցաշարն ունի անվանում, կարող է ունենալ նաև նկարագրություն, դրանում ընդգրկված հարցերի առավելագույն քանակ և այլն: Ցուրաքանչյուր հարց ունի հստակ սահմանված կամ հնարավոր միավորներ: Գործընթացի մանրամասն նկարագրությունը ներկայացված է Գլուխ 5-ի, 5.1 բաժնում:
Հղում առկա գործընթացին	Գ27- Գնումների համակարգողի որակավորման շնորհման քննության կազմակերպում
Տիրույթ	Թեստավորման մոդուլ
Դերակատարներ	Թեստավորման պատասխանատու, դիմորդ
Մուտքային տվյալներ	-
Ելքային տվյալներ	-

3.9.1.2 Թեստի ակտիվացում

Նպատակ	Գնումների համակարգողի որակավորման շնորհման քննության թեստի ակտիվացում Համակարգում
Նկարագրություն /Ընթացք	Գնումների համակարգողի որակավորման շնորհման քննության կազմակերպման համար թեստավորման պատասխանատուն Համակարգում նշում է հերթական քննության անցկացման օրը, որը

	արտացոլվում է տեղեկատվական պորտալի համապատասխան (օրացուցային) դաշտում: Գործընթացի մանրամասն նկարագրությունը ներկայացված է Գլուխ 5-ի, 5.2 բաժնում:
Հղում առկա գործընթացին	Գ27-Գնումների համակարգողի որակավորման շնորհման քննության կազմակերպում
Տիրույթ	Թեստավորման մոդուլ
Դերակատարներ	Թեստավորման պատասխանատու
Մուտքային տվյալներ	-
Ելքային տվյալներ	-

3.9.1.3 Թեստի անցկացում

Նպատակ	Գնումների համակարգողի որակավորման շնորհման քննության թեստի անցկացում, արդյունքների ամփոփում, հրապարակում
Նկարագրություն /Ընթացք	Գնումների համակարգողի որակավորման շնորհման քննության թեստի անցկացման գործընթացը մանրամասն ներկայացված է Գլուխ 5-ի, 5.3 բաժնում:
Հղում առկա գործընթացին	Գ26-ՀՀ օրենքով սահմանված գնումների համակարգողների քննության անցկացում և որակավորման շնորհում Գ27-Գնումների համակարգողի որակավորման շնորհման քննության կազմակերպում Գ11-Գնման գործընթացների վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված տեղեկությունների հրապարակում տեղեկագրում
Տիրույթ	Թեստավորման մոդուլ, տեղեկատվական պորտալ

Դերակատարներ	Թեստավորման պատասխանատու, դիմորդ
Մուտքային տվյալներ	ԳՄ1
Ելքային տվյալներ	Թ1

3.10 Վերապատրաստում

Վերապատրաստման մոդուլը թույլ է տալու ՀՀ ՖՆ գնումների քաղաքականության վարչությանը /Լիազոր մարմին/ կազմակերպել Գնումների համակարգողի որակավորում ունեցող մասնագետների վերապատրաստման դասընթացներ (ինչպես առկա, այնպես էլ առցանց), ընդգրկել դասընթացներում համապատասխան որակավորում ունեցող անձանց, վարել հաճախման մատյաններ և այլն:

Գնումների համակարգողների որակավորման շարունակական մասնագիտական վերապատրաստում իրականացնելու համար անհրաժեշտ են լինելու հետևյալ գործընթացները.

- դասընթացի ակտիվացում
- դասընթացի անցկացում

3.10.1 Դասընթացի ակտիվացում

Նպատակ	Վերապատրաստման ենթակա գնումների համակարգողների դասընթացի ակտիվացում
Նկարագրություն /Ընթացք	Վերապատրաստման ենթակա գնումների համակարգողների դասընթացի ակտիվացման գործընթացը մանրամասն ներկայացված է Գլուխ 6-ի, 6.1 բաժնում:
Հղում առկա գործընթացին	Գ28-Գնումների համակարգողների շարունակական մասնագիտական վերապատրաստում Գ11-Գնման գործընթացների վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված տեղեկությունների հրապարակում տեղեկագրում

Տիրույթ	Վերապատրաստման մոդուլ, տեղեկատվական պորտալ
Դերակատարներ	Լիազոր մարմին, գնումների համակարգող
Մուտքային տվյալներ	ԳՄ2
Ելքային տվյալներ	Վ1

3.10.2 Դասընթացի անցկացում, արդյունքների ամփոփում

Նպատակ	Վերապատրաստման ենթակա գնումների համակարգողների դասընթացի անցկացում, արդյունքների ամփոփում, գնումների համակարգողի որակավորման դադարեցում
Նկարագրություն /Ընթացք	Վերապատրաստման ենթակա գնումների համակարգողների դասընթացի անցկացման գործընթացի մանրամասն նկարագրությունը ներկայացված է Գլուխ 6-ի, 6.2 բաժնում:
Հղում առկա գործընթացին	Գ28-Գնումների համակարգողների շարունակական մասնագիտական վերապատրաստում Գ29-Գնումների համակարգողի որակավորման դադարեցում Գ11-Գնման գործընթացների վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված տեղեկությունների հրապարակում տեղեկագրում
Տիրույթ	Վերապատրաստման մոդուլ, տեղեկատվական պորտալ
Դերակատարներ	Լիազոր մարմին, գնումների համակարգող
Մուտքային տվյալներ	ԳՄ2
Ելքային տվյալներ	Վ1